



Այունյաց երկիր

Գինը 100 դրամ:

ՈՒՐԱԾ
15 ՓԵՏՐՎԱՐԻ 2013Թ. • № 4 (277)

www.syuniacyerkir.am

...Կյանք է՝
եւ մի ակնկալի
անփոթորիկ ծով. եւ
էթե խորպակվում
ես՝ մեղքը քունն է եւ
ոչ թե փոթորիկինը:
ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ



ՄՏԱՎՈՐԱԿՎԱԿԱՆ ԿՈՂՄԱՆԱԿՆԵՐ

ՎԱԶԵ ԵՓՐԵՄՅԱՆ. «Սպրուկ ունենալ, նշանակում է ինքնակամ հրաժարվել ազատությունից, կախված լինել սպրուկի՝ հնարավոր ապստամբության տրագիկոմիայից»

2013թ. հունվարի 31-ին Կապանը վերջին հրաժեշտը տվեց Վաչե Եփրեմյանին:

Սյունիքին աղեպ է սպառնում

ԵՎՍ ՄԵԿ ՄԱՐՏԱՅՐԱՎԵՐ

ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Վարահաբար եմ ասում, էթե իրականությունն դառնա հուշագիրը, որն Իրան այցի ժամանակ համաձայնագրի տեսքով վավերացրել են Սյունիքի մարզի գյուղատնտեսության պատասխանատու Սամվել Թանգյանն ու Արրապարականի ցեղաբնակների գործերի կոոպերատիվ միության ընդհանուր փնթեկն Գուրբան Ֆեյզին, մահացու վրանգի մեջ կհայտնվի Նժդեհի ու նրա կորույթի մարտիկների փրկած երկրամասը: Խոսքն այն բազմաթիվ հորերի մասին է, որոնք այդուհետ խուժելու են լեռնաշխարհ՝ հսկողությամբ խաշնարածների, ովքեր բնակություն են հաստատելու Գորիսում, Սիսիանում ու էլի չգիտեմ որտեղ: Պարոնայք, պարտության ոչ մի դաս դուք չյուրացրի՞ք, ձեզ թվում է... Գերադասելին, սակայն, անցյալին չարվելն է, ուստի վերադառնա՞մ իրականություն:

Համաձայնագրով առնվազն 50 հազար հեկտար հողատարածք նվազագույնը տասը տարով վարձակալությամբ տրվելու է օտարին՝ հետևաբար 26 ԱՄՆ դոլարով: Բացի դա՝ 2000 հա տարածք է հատկացվելու եկվորին՝ բնակության համար, Գորիսում կառուցվելու է սպանդանոց, Սիսիանում՝ համակցված կերերի գործարան... Չասե՛ս գործարքը վավերացնողներին, առավել եւս՝ խրախուսողներին՝ էլ հոշոտելու բան չի մնացել, հասար հողերի՞ն: Վաղվա սերնդին ի՞նչ պատասխան եք տալու, ու՞մ վրա եք բարդելու մեղքը՝ համաշխարհային ճգնաժամի: Դուք ընդհանրապես գիրք, թերթ, գիտական հոդված, վերլուծական կարդու՞մ եք, համացանցից ծանոթ եք ՄԱԿ-ի պարենի եւ գյուղատնտեսության հարցերի կազմակերպության՝ FAO-ի անենամյա ամփոփագրերին, անասնապահության զարգացման ներկայիս միտումներին: Կասկածում եմ: Եթե գիտակ լինեիք, նախկին գյուղնախարարը հպարտությամբ 2010-ի հունվարին կասե՛ր. «Իրանից, ինչպես նաեւ այլ երկրներից ներդրողներ են եկել Հայաստան, պայմանավորվածություն է ձեռք բերվել, որպեսզի կարողանանք ոչխարաբուծությունը զարգացնել»: Նորի բերանով արդեն խոսք է գնում ոչխարի գլխաքանակը 1,5 միլիոնի հասցնելու (ներկայումս՝ 592,2 հազար), արաբական երկրներից մեկի հետ նախնական գործարքի մասին: Շարունակությունը՝ էջ 13

«Ժառանգության» առաջնորդը Սյունիքում էր

ՆԱԽԱԳԱՀԱՎԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ-2013

Քարոզարշավի շրջանակում փետրվարի 2-3-ը ՀՀ Նախագահի թեկնածու Ռաֆֆի Հովհաննիսյանը Սյունիքում էր: Նա ընտրողների հետ հանդիպումներ ունեցավ Սյունիքի մարզի Սիսիան, Գորիս, Կապան, Զաջարան, Մեղրի եւ Ագարակ քաղաքներում:

Սիսիանում լեփ-լեցուն դահլիճում ելույթ ունենալով ընտրողների առջեւ, Ռաֆֆի Հովհաննիսյանը մասնավորապես նշեց. «Հայաստանում տիրող բարոյահոգեբանական եւ սոցիալ-տնտեսական այս իրավիճակը, որի գլխավոր պատասխանատուն ՀՀ գործող նախագահն է, այլեւս չի կարող շարունակվել: Ուրեմն նախագահական ընտրություններին մենք միասին մեկ անգամ եւ ընդմիջտ պետք է փոխենք առկա աղետալի վիճակը»: Այլ խնդիրների շարքում նա անդրադարձավ նաեւ ուրա-

նի հանքերի շահագործման վտանգավորությանը:

Ռաֆֆի Հովհաննիսյանը ելույթ ունենալով Կապանի կենտրոնական հրապարակում հավաքված հարյուրավոր կապանցիների առջեւ, ասաց. «Հայաստանի շատ մարզերում առկա վախի մթնոլորտի համար պատասխանատու են դե-ֆակտո նախագահը եւ նրա կողմից նշանակված մարզպետները: Այդ իսկ պատճառով մենք ասում ենք, որ Սերժի Հայաստանը պետք է փոխարինվի Նոր Հայաստանով, որի քաղաքացին իրեն լիիրավ տեր կզգա սեփական հայրենիքում եւ որի իրավունքները հարգված կլինեն, իսկ տեղական չինովնիկները՝ մարզպետ, քաղաքապետ, թե գյուղապետ, ոչ թե իրենց կապիտալ տիրակալների նման, այլ կլինեն ձեռք բերողի ծառաները: Դա ձեզանից է կախված, եթե դուք փետրվարի 18-ին մեր պետության պատմության մեջ առաջին անգամ ընտրական հեղափոխություն իրականացնեք»: Նա նաեւ անդրադարձավ համքարյունաբերության խնդիրներին՝ անթույլատրելի համարելով մի

խումբ մարդկանց կողմից համազգային սեփականություն հանդիսացող հանքերի մասնավորեցումը եւ անխնայ շահագործումը՝ ի վնաս շրջակա միջավայրի: Մեղրիում եւ Ագարակում հանդիպելով բնակիչների հետ, նա արծարծեց պտուղ-բաջարեղենի վերանշակման գործարանի, չրանցների հիմնադրման համար պետության կողմից բարենպաստ պայմանների ստեղծման անհրաժեշտության խնդիրները:



Դրա համար էլ ժողովուրդն ինքը պետք է ձեռավորի իր իշխանությունը եւ չընկնի ոչ պարտադրանքի առջեւ եւ ոչ էլ տրվի էժանագին գաղթականություններին կամ «բարեգործական» ողորմություններին:

www.heritage.am
Հ.Գ. Փետրվարի 7-ին նախընտրական քարոզչության շրջանակից դուրս Ռաֆֆի Հովհաննիսյանը պաշտոնական այցով մեկնել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն՝ Արցախի ճանաչման վերաբերյալ իր ծրագրային դրույթն իրագործելուց առաջ հանդիպելու ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանին, ինչպես նաեւ այցելելու Արցախի պաշտպանական բանակի զորամասեր: Այս մասին հայտնում են Ռաֆֆի Հովհաննիսյանի նախընտրական շտաբից: Ծանապարհին Ռ.Հովհաննիսյանը կանգ է առել Սյունիքի մարզի Վերիշեն, Հարթաշեն, Խնձորեսկ, Զարաշեն, Խանածախ, Տեղ գյուղերում եւ կարճատեւ հանդիպումներ ունեցել բնակչության հետ: Այդ ընթացքում ՀՀ նախագահի թեկնածուի նախընտրական շտաբի՝ նրան ուղեկցող անդամները Նոր ընտրախախտումներ արձանագրեցին Խանածախ եւ Տեղ գյուղերում:

Կկարողանա՞ նոր կառավարությունը Շաքեի ջրվեժն ազատագրել գերությունից

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՍԻՍԻԱՆ

Մի խումբ սիսիանցիներ «Սյունյաց երկիր» հղած նամակում ավստասանք են հայտնում, որ նախընտրական քարոզչության նպատակով Սիսիան այցելած Սերժ Սարգսյանի հետ հանդիպմանը չեն կարողացել մասնակցել, թեև դրա համար շարք ջանք են գործադրել: Նրանք ընդամենը մեկ հարց ունեին Սերժ Սարգսյանին:

Ահավասիկ՝ «Պարոն նախագահ, վերընտրվելու դեպքում Դուք կկարողանա՞ք գերությունից ազատագրել Սիսիանի հրաշալիքը՝ Շաքեի ջրվեժը, թե՞...»: Նամակագիրները հույս ունեին, որ Աղասի Գալստյանը՝ երկրորդ անգամ Սիսիանի քաղաքապետ նշանակվելուց հետո, վեր կկանգնի անձնական շահից եւ գոնե ջրվեժի հարցում նախապատվություն կտա Սիսիանի ընդհանրական շահին: Բայց... Ինչպես արդեն երեւում է, նա չի պատրաստվում հրաժարվել Շաքեի ջրվեժի տիրակալը լինելուց, քանի որ ջրվեժի ջրերն օգտագործում է սեփական հեկտարային շահագործող եւ անձնական եկամուտներ ստանալու համար: Սիսիանցիները, պարզվում է, խնդրո հարցով դիմել էին նաեւ Գալստյանին՝ Սարգսյանի հետ հանդիպմանը մասնակցելու: Վերջինս խոստացել էր, որ Շաքեի ջրվեժը կազատագրի նվաճողներից: Սակայն շատ շուտով ակնհայտ դարձավ, որ վարչապետն ի վիճակի չէ լուծելու սիսիանցիներին մտահոգող այդ հարցը, ինչի համար էլ մարդիկ «Սյունյաց երկիր» միջոցով դիմում են Գալստյանին:

Իսկ ի՞նչ է մտածում այդ կապակցությամբ Սիսիանի քաղաքապետ Աղասի Գալստյանը, ով ջրվեժի ջրերն օգտագործող հեկտարային տերերից մեկն է: Հարցին նա պատասխանել է դեռեւս 2011թ. հունիսի 30-ին «Սյունյաց երկիր» տված հարցազրույցում: Անկողմնակալ լինելու համար բերում ենք նրա պատասխանի ամբողջական տեքստը: Ահա՝ «1998-ին Շաքեի հեկտ ձեռք է

բերել «Հակաբջջանյան եւ Գալստյան հեկտ» ՍՊ ընկերությունը: Մրցույթի պայմաններին համապատասխան հեկտ պետք է աշխատի 1.8 խորանարդ մետր վայրկյան ջրով եւ պետք է արտադրի 840 կվ/ժ էլեկտրաէներգիա: Կառավարության կողմից հաստատված այդ պայմաններով էլ ՍՊԸ-ն պետք է աշխատի: Մինչդեռ կան մասնագիտական չափազանցներ, զննահատույններ, ըստ որոնց՝ հեկտ առայսօր աշխատում է (միջին հաշվով) 1.3 խորանարդ մետր վայրկյան ջրով: Շաքեի աղբյուրից ընդհանուր առմամբ դուրս է գալիս մոտ երկու խորանարդ մետր վայրկյան ջուր: 1.3-ն ուղղվում է հեկտին, մնացածն օգտագործվում է Սիսիան քաղաքի, ինչպես եւ մի քանի գյուղերի խմելու եւ ոռոգման ջրով մատակարարելու նպատակով: Ինչո՞ւ ջրվեժը չի բանում ամբողջ օրը: Իհարկե, ջուր չի կտրուկ պատճառով: Եթե հեկտ զնվել է պետությունից եւ զնվել է որոշակի պայմաններով, եթե հեկտ պարտավորություն չի կրում ջրվեժի շուրջօրյա աշխատանքի համար, եթե հատկացված ջուրը չի բավարարում հեկտ սահմանված հզորությամբ աշխատեցնելու համար, ապա ինչո՞ւ պետք է անընդհատ մեղադրանքներ հնչեցնել ՍՊ ընկերության հասցեին: Այդ անենով հանդերձ, սակայն, ՍՊԸ-ն հարցը դիտում է այլ տեսանկյունից: Մի բան կարող են ստույգ ասել՝ չկա մի մարդ, որ ջրվեժը դիտելու ցանկություն ունենա եւ այն չդիտի, եւ մենք հնարավորություն չտանք նրան: Շատ լավ հասկանում ենք, որ Սիսիան եկող զբոսաշրջիկը գալիս է նաեւ ջրվեժի համար... Խնդրեն, նայեք հեկտի օպերատիվ գրանցումների մատյանը: Օրական միջին հաշվով 5-10 անգամ հարկադրված կանգնեցվում են ջրվեժի տերերը, ինչը ոչ թե ֆինանսական, այլ տեխնիկական խնդիրներ է առաջ բերում հեկտի աշխատանքում (ոչ ցանկալի հիդրավիկ հարվածներ, էլեկտրական անջատումներ եւ այլն): Այդ է իրականությունը, մնացած բոլոր խոսակցությունները՝ արգելքների, դրամահավաքության մասին, ծիծաղելի են պարզապես»:



Առաջին հայացքից եւ պահանջատեր սիսիանցիները, եւ ջրերն օգտագործող Աղասի Գալստյանը ճիշտ են յուրովի: Սակայն... Սա այն իրավիճակն է, որից դուրս գալու մեկ ելք կա, որքան էլ պատճառաբանությունները հիմնավոր լինեն: Իսկ ելքը հետեւյալն է՝ ջրվեժը պետք է անհապաղ ազատագրվի եւ վերադարձվի հայ հանրությանն ու զբոսաշրջիկներին, խանգարող-խոչընդոտող

որոշումներն ու պայմանագրերն էլ պետք է վերանայվեն ու չեղյալ հայտարարվեն: Աղասի Գալստյանը եւ պետք է լինի մեր առաջարկած ելքի ջատագովը, այլապես ծիծաղելի կլինեն (եթե արդեն ծիծաղելի չեն) Սիսիանի ու սիսիանցու թասիթի մասին նրա՝ անընդհատ հնչող ճամարտակությունները:

ԱՍՏՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Արեւելյան Արրպատականի նահանգապետը՝ Սյունիքում



ՀԱՍՏԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Սյունիքի մարզի եւ ԻԻՀ Արեւելյան Արրպատականի միջեւ գոյություն ունեցող տնտեսական կապերի ամրապնդման եւ համագործակցության զարգացման նպատակով Կապանի մշակույթի պալատում փետրվարի 1-ին տեղի ունեցավ իրականացված արտադրության ապրանքների ցուցահանդես, որի բացմանը ներկա էին Արեւելյան Արրպատականի նահանգապետ Ահմադ Ալիոնեզա Բեյգին եւ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը: Ցուցադրությունը դիտելուց հետո հյուրերն ունկնդրեցին Հայ առաքելական եկեղեցու Արրպատականի թեմի «Կոմիտաս» երգչախմբի կատարումները, որից հետո Ահմադ Ալիոնեզա Բեյգին Սյունիքի մարզպետին նվիրեց Սբ Թադեոս եւ Սբ Ստեփանոս Նախավկա վանքերի մանրակերտերը՝ պատրաստված Թավրիզում: Շնորհակալություն հայտնելով հյուրերին՝ Սյունիքի մարզպետն ասաց, որ հայ-իրանական բարեկամությունն էլ ավելի պետք է ամրապնդվի: Այնուհետեւ Սուրիկ Խաչատրյանը Արրպատականի նահանգապետին նվիրեց Սյունիքի մարզպետական կառավարման կենտրոնի մարզադահլիճի կառուցման համար 153 տեղամասային ընտրական հանձնաժողովներ, այդ թվում՝ N37-ում 77, N38՝ 76 հանձնաժողով: Ովքե՞ր են գլխավորում տեղամասային ընտրական հանձնաժողովները՝ ըստ կուսակցական պատկանելության: Այսպես՝ 153 ՏԸՀ-ից 70-ի նախագահը ՀՀԿ անդամ է, 47-ը՝ ԲՀԿ անդամ, 9-ը՝ ՕԵԿ անդամ, 9-ը՝ «Ժառանգության» անդամ, 8-ը՝ ՀՀԴԻ անդամ, 9-ը՝ ՀԱԿ անդամ: Տեղամասային ընտրական հանձնաժողովների քարտուղարների կուսակցական պատկանելությունն ունի հետեւյալ պատկերը՝ 153 ՏԸՀ-ից 71-ի քարտուղարը ՀՀԿ անդամ է, 46-ը՝ ԲՀԿ անդամ, 9-ը՝ ՕԵԿ անդամ, 10-ը՝ «Ժառանգության» անդամ, 8-ը՝ ՀՀԴԻ անդամ, 10-ը՝ ՀԱԿ անդամ:

տականի նահանգապետին նվիրեց ոսկե ժամացույց՝ ի նշան երախտագիտության: Արեւելյան Արրպատականի պատվիրակության ներկայացուցիչները նշեցին, որ փետրվարի 1-ին լրանում է Իրանի իսլամական հեղափոխության 34-րդ տարեդարձը, որը կնշվի տասը օր շարունակ: Հանդիսությունների տասնօրյակը կրում է «Ֆաջր» («Լուսաբաց») անվանումը: ԻԻՀ ներկայացուցիչները նշեցին նաեւ, որ «Ֆաջրի» ընթացքում կկազմակերպվի ավելի քան հարյուր հազար միջոցառում, այդ թվում՝ ցուցահանդեսներ, կինոփառատոներ, մարզական մրցումներ, թատերական ներկայացումներ: Ցուցահանդեսին հաջորդած համերգային ծրագրի ժամանակ ցուցադրվեց երկու տեսաֆիլմ, որից մեկը նվիրված էր ԻԻՀ-ի հեղափոխության 34-րդ տարեդարձին, իսկ մյուսը՝ Արեւելյան Արրպատականին: Նույն օրը հյուրերն այցելեցին Կահանավանքի վանական համալիր, Գարեգին Նժդեհի հուշահամալիր, Կապանի երկրագիտական եւ Կապանի պատմության թանգարաններ:

ԶԱՐԻՆԵ ՀԱՏԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Հանդիպում «Դինո գոլդ մայնինգ քամփնի» ՓԲԸ-ում

Ինչպես արդեն հաղորդվել է, ս.թ. հունվարի 22-ին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանն այցելել է Կապանի «Դինո գոլդ մայնինգ քամփնի» ՓԲԸ ընկերություն, որի ղեկավար կազմի հետ հանդիպման ժամանակ ՓԲԸ վարչական տնօրեն Հրաչ Զարբայանը ՀՀ նախագահին է ներկայացրել համառոտ տեղեկատվություն ձեռնարկության գործունեության մասին: Հրաչ Զարբայանի ելույթը՝ ստորև:

Մեծարգո պարոն նախագահ Deno Gold Mining Company-ն կանադական Dundee Precious Metals ընկերության սեփականություն է դարձել 2006 թվականին: Dundee Precious Metals ընկերությունը գտնվում է Կանադայի Տորոնտո քաղաքում: Անցյալ վեց եւ մի քիչ ավելի տարիներին ներդրել ենք 155 մլն դոլար եւ հիմա ուրախ ենք ասելու, որ այս պահի դրությամբ Deno Gold-ը Հայաստանի ստորգետնյա հանքարդյունաբերության առաջատար ընկերությունն է: Մեր վերջնական նպատակն է Deno Gold-ը դարձնել Հայաստանի այն ընկերությունը, որի աշխատանքը հիմնված է բացառապես կանադական, ասել է թե՛ միջազգային ամենաբարձր չափանիշների վրա: Այդ նպատակին հասնելու համար անցյալ տարի կատարեցինք լուրջ նախապատրաստական աշխատանքներ, որոնցից մի քանիսն առանձնացնում են:

- Անվտանգության պարտադիր դասընթացներ 1200-ից ավելի աշխատակցի համար:
- Անվտանգության դասընթացներ բոլոր ցանկացող աշխատողների համար:
- Ընկերության տեղացի աշխատողները միջազգային մակարդակով ճանաչված համալսարաններում մասնակցել են մասնագիտական դասընթացների, այդ թվում՝ Անգլիայում, Ֆինլանդիայում, Բուլղարիայում, ԱՄՆ-ում եւ Կանադայում:
- Կազմակերպել ենք յուրահատուկ դասընթացներ մեր շարժակազմի եւ հանքի աշխատավորների համար, իսկ այս տարի կհիմնենք մեր ներքին շարժակազմի եւ հանքի աշխատողների համար նախատեսված մասնագիտացված դպրոց, որտեղ կկազմակերպվեն միջազգային չափորոշիչներով դասընթացներ:
- Deno Goldը 2012թ. կառուցել է ստորգետնյա փրկարարական ապաստարան. այն բացառիկ է եւ համապատասխանում է միջազգային արդի ամենաեզակի չափանիշներին, եզակի ոչ միայն Հայաստանում, այլև ողջ անդրկովկասյան տարածաշրջանում, ու դրանով իսկ առավել ապահով է դարձել մեր աշխատողների անվտանգությունը: Նմանատիպ եւս մեկ ապաստարան կկառուցվի 2013-ին:



ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը եւ «Դինո գոլդ մայնինգ քամփնի» ՓԲԸ վարչական տնօրեն Հրաչ Զարբայանը

– Այս ամսում ավարտեցինք ընկերության արտադրական հզորությունների մեծացմանը միտված ծրագիրը, որը թույլ կտա բարելավել հանքաքարի մշակումը՝ հնտորեն մեծացնելով աշխատանքի արդյունավետությունը:

Թվարկված ծրագրերի համար նախատեսել ենք մեկ տարվա ընթացքում ծախսել մոտ 2.9 մլրդ դրամ:

- Իսկ վերջին երեք տարում մեր ակնառու ներդրումները թվերի լեզվով ունեն հետեւյալ պատկերը.
- 6 մլրդ դրամ՝ բնապահպանական ծրագրերի իրականացման համար,
- 2 մլրդ դրամ՝ աշխատողների առողջության եւ անվտանգության ապահովման համար,
- 800 մլն դրամ՝ աշխատողների ուսուցման եւ վերապատրաստման համար:
- 2012թ. աշխատողների աշխատավարձի ֆոնդը մեծացել է 400 միլիոն դրամով, ինչպես նաեւ վճարվել է 320 մլն դրամ պարգեւավճար, որի մեջ ղեկավար աշխատակազմի աշխատավարձը ներառված չէ: «Դինո գոլդ մայնինգ քամփնի» ՓԲԸ-ի աշխատավորների միջին աշխատավարձն ամսական կտրվածքով կազմում է 250.000 դրամ, այդ հաշվարկի մեջ չեն մտնում թե հայ ղեկավար աշխատակազմի, թե արտասահմանցի 50 աշխատողի աշխատավարձերը:

Ձեր նախագահության երկրորդ հնգամյակի (ես դա ասում եմ ամենայն հանգովածությամբ, որովհետեւ կասկած չունեն, որ Դուք կվերընտրվեք, քանզի Ձեր հեղինակությունն այդ առումով կասկածի տեղիք չի տալիս) առաջիկա տարվա ընթացքում Ձեզ կրկին հրավիրում ենք Deno Gold՝ այս անգամ ներկայացնելու ինչպես վերոհիշյալ աշխատանքների արդյունքները, այնպես էլ գանազան այլ ծրագրեր: Այդ ամենի հետ մեկտեղ շարունակում ենք հանքարդյունաբերության հետախուզական աշխատանքները՝ ստորագետնյա եւ թե՛ մակերեսային ուղղվածությամբ: Նպատակն է որոշել մեր հանքավայրի կարողությունները, ըստ այդմ էլ որոշել բաց եղանակով մշակման անցնելու հնարավորությունը: Վերջին տարբերակի իրագործման դեպքում այն կլինի միայն միջազգային ամենաբարձր չափանիշների համապատասխան: Համանման մոտեցում ունենք նաեւ ստորգետնյա հանքի ընդլայնման հետախուզական աշխատանքների վերաբերյալ: Ենթադրում ենք, որ ընթացիկ՝ 2013 տարվա երկրորդ կեսին նախարարություն կներկայացնենք ուսումնասիրությունների վերջնական արդյունքները: Հետախուզական աշխատանքների համար 2012թ. ներդրել ենք մոտ 6 մլրդ 800 մլն դրամ: Նույնքան գումար ենք նախատեսել նաեւ 2013թ. համար: Վերջնական որոշման դեպքում այն, օրենքով նախատեսված կարգով, ներկայացնելու ենք հանրային քննարկման:

Մենք հպարտ ենք եւ ուրախ, որ հաջողություններ ենք արձանագրել հայրենիքում: Բայց մեր ամենամեծ հպարտությունը մեր նվիրվածությունն է մեր քաղաքին, մեր ժողովրդին եւ մեր հայրենի սուրբ հողին: Եվ այդ նվիրվածությունն է, որ մեզ չի թուլատրում անտարբեր մնալ Կապանի սոցիալական ոլորտում առկա հարցերի հանդեպ: Անցյալ տարվա ընթացքում մեր ուշադրության կենտրոնում են եղել քաղաքի մանկապարտեզները, որտեղ իրականացրել ենք նպատակային ծրագրեր, փորձել բարելավել դրանց սանհանգույցների, խոհանոցների, խմբասենյակների վիճակը: Այդ աշխատանքները կշարունակվեն այս տարի եւս:

Անցած տարվա տարվա սոցիալական ծրագրերի մեջ լուրջ տեղ գրավեցին նաեւ դպրոցներն ու քոլեջները, Հայ առաքելական եկեղեցին՝ իր կիրակնօրյա դպրոցներով, մարզկենտրոնի խաղահրապարակներն ու հիվանդանոցը, կարմիր խաչի մասնաճյուղն ու անապահով ընտա-

նիքները, բուժման կարիքավորները, ուսման վարձավճարի խնդիր ունեցողները, մանուկների ամառային ճամբարները, նոր տարվա տոնակատարությունը, տոնացույցի մյուս օրերը, Կապանի քաղաքապետարանն ու շրջակա համայնքները, քաղաքի թանգարաններն ու Արցախյան սուրբ պայքարում զոհված ազատամարտիկների ընտանիքները, ինչպես նաեւ սոցիալապես անապահով հարյուրավոր քաղաքացիներ, բազմաթիվ մարզական եւ բարեսիրական հասարակական կազմակերպություններ: Այդ ամենի համար վերջին տարվա տարվա ընթացքում տրամադրվել է շուրջ 600 մլն դրամ, եւ խոստանում ենք, որ նորանոր ներդրումներով կշարունակենք այդ ծրագրերը: 2012թ. ուշադրությունից դուրս չմնաց նաեւ Ձեր հրամանատարության տակ գտնվող եւ մեր բոլորի սիրելի հայրց բանակը. տարվա ընթացքում սահմանապահ զորամասերից մեկը ստացավ մեր հատուկ շինարարական օգնությունը: Նոր տարվա առթիվ զորամասին տրամադրվեց սնունդ, իսկ 70 սպայի երեխաներ ստացան տոնական նվերներ: Անցյալ տարվա ընթացքում երեք այցելություն կազմակերպեցինք Արցախ՝ երկու-երեք օր ժամանակով, որոնցից երկուսին մասնակցեցին Արցախում երբեւէ չէղած մեր աշխատողները, իսկ երրորդը կազմակերպվեց քաղաքի ավելի քան 75 պատանու ու աղջկա համար:

Մենք հաջողության ճանապարհին ենք եւ վստահ ենք, որ նորանոր գործեր են մեզ սպասում: Մենք երիտասարդ ենք եւ փորձառու, մեր կամքն ուժեղ է, բայց այս բոլորի կողքին երբեք չենք մոռանում համատարած ու ազնվության մասին: Մենք պատրաստակամ ենք ծառայելու մեր ժողովրդին եւ այս ամենատարբեր հայրենիքի մասին: Թող ձեր շուքն անպակաս լինի հայ ժողովրդի վրայից: Թող Աստված օգնական լինի Ձեզ:

«Սեր քվեն արժե ավելին» ծրագրի շրջանակներում փետրվարի 7-ին Կապանի «Լեռնագործ» իյուրանոցում կազմակերպվել էր բանավեճ, որին մասնակցում էին ՀՀԿ եւ «Ժառանգություն» կուսակցությունների ներկայացուցիչներ Վաչե Գրիգորյանը (ՀՀԿ) եւ Սամվել Հայրապետյանը («Ժառանգություն»): Կազմակերպված բանավեճին ՀՀ նախագահի մյուս թեկնածուների նախընտրական շտաբերը չէին արձագանքել: Վերոնշյալ ծրագրին աջակցել էին Քաունթերփարթ Ինթերնեշնլի հայաստանյան ներկայացուցչությունը եւ ԱՄՆ միջազգային զարգացման գործակալությունը: Հանդիպման ընթացքում հնչեցին ընտրության առնչվող տարբեր հարցեր, քննարկվեցին ՀՀ նախագահի թեկնածուների դիրքորոշումները, ծրագրերը եւ կարգախոսները:

Չորրորդ տարին է, ինչ Կապանի N6 հիմնական դպրոցում վերականգնվել է շրջանավարտների հանդիպման երեկոների ավանդույթը: Փետրվարի 4-ին կրթօջախում հավաքվել էին տարբեր տարիների շրջանավարտներ: Ցուցարկվեց դպրոցի տարեգրությունն ամփոփող տեսանյութ, որում ըստ արժանվույն զննատվեց կրթօջախը ղեկավարած տնօրենների վաստակը: Դպրոցի նախկին սաներին, կրթօջախի մանկավարժական կոլեկտիվին բարեմտաբանի խոսքի հոյեցին մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության պետ Լեւոն Մարգարյանը, դպրոցի նախկին տնօրեն, այժմ ՀԴԹՀ Կապանի մասնաճյուղի տնօրեն Լեռնիկ Պետրոսյանը, դպրոցի տնօրեն Մարինե Դավթյանը: Միասնական երգով հանդես եկան այն մանկավարժները, ովքեր ավարտել են այժմ ուսուցչություն եւ ամուսն հարգատ դպրոցում:

Հունվարի 30-ին մեկնարկեց եւ փետրվարի 8-ին ավարտվեց դպրոցականների 22-րդ մարզական խաղերի համայնքային փուլի ֆուտբոլի մրցաշարը, որն անցկացվեց Կապանի մանկապատանեկան մարզադպրոցում: Մրցաշարին երեք ենթախմբով մասնակցում էր Կապանի դպրոցների 12 թիմ: Եզրափակում համառ մրցապայքարում 6:5 հաշվով հաղթելով Աճառանի համայնքի դպրոցի թիմին, առաջին տեղը գրավեց Կապանի N10 միջնակարգ դպրոցի թիմը: Երրորդ տեղում Կապանի N3 միջնակարգ դպրոցի հավաքականն էր: Մրցանակակիր այս երեք թիմին մարզպետարանի կողմից մրցանակ եւ օգնություններ, մեդալներ, պատվոգրեր հանձնեց Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը: Քաղաքապետարանի կողմից մրցանակ էր սահմանվել մրցաշարի լավագույն խաղացողի համար:

Փետրվարի 8-ին Կապանում էր «Օրինաց երկիր» կուսակցության առաջնորդ Արթուր Բաղդասարյանը: Մշակույթի կենտրոնում նա հանդիպեց կուսակցության մարզային ակտիվի եւ համակիրների հետ: Հանդիպումը քարոզարշավի շրջանակներում էր, որի ընթացքում քննարկվեց ՀՀ նախագահի ընտրությունում նախագահի թեկնածու, գործող նախագահ Սերժ Սարգսյանին սատարելու հարցը: ՕեԿ առաջնորդը կոչ է արել կուսակցի ընկերներին ու համակիրներին՝ մասնակցել ՀՀ նախագահի ընտրությանը եւ քվեարկել ՀՀԿ թեկնածուի օգտին: Քննարկվեցին Սերժ Սարգսյանի նախընտրական ծրագրի որոշ դրույթներ: Հանդիպման վերջում ներկայացվեց «Օրինաց երկիր» կուսակցության 2012թ. կատարած աշխատանքների ամփոփ նկարագիրը:

■

ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ը ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ ՕՐՆ Է

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Ասկեղծ ջենք



Ամենայն հայոց հոգեհայրը

Ես կարդում եմ նրան ու ասում.- Այս հմուտ, հանճարեղ լռեցիկ Հումբեր, Գյոթեի հետ մի օր՝ հավասար՝ նստել է բեֆի, Եվ թաս է բռնել նրանց հետ, մեծարանք առել ու փվել, Ինչպես իր պապերն են արել՝ իրար հետ խնջույքի նստելիս:

Եղիշե Չարենց

«Գրողը մնայուն, հավերժական գործեր պիտի տա՝ խիտ, խորը, ուժեղ...»:

Այս խորհրդածությունն իբրև պատգամ ու համոզմունք, անկասկած, հաճախ պիտի լսած լինեմ այն բախտավորները, ում վիճակվել էր նրա ժամանակակիցն ու գրուցակիցը լինել: Թերեւս, սա մի հասակ բնաբան է, որ ամեն մի գրողի էթոսն է սկզբնախնդիրը, ապա գոնե վերջնախնդիրը պիտի համդիսանա: Իսկ Թումանյանի ստեղծագործական կյանքում դա մի անփոփոխ հայեցակետ էր, որը նրան մշտապես ուղեկցող միակ չափանիշը եղավ. թե՛ այն ժամանակ, երբ «Շունն ու կատուն» էր գրում, թե՛ այն ժամանակ, երբ իր վերջին քառյակի վերջին տողն էր ավարտում....

Որեւէ բանաստեղծի բանաստեղծական աշխարհի մասին խոսելիս, նրա ստեղծագործական ժառանգությունը քաղաքակրթության գոյության բազմադարյան ֆունդի վրա արժեւորելիս՝ ներդրումն ունի ինչ-որ մի փափկանկատ, թերեւս՝ գործվածքի կեցվածք ենթապահանում. հաշվի առնելով ոչ միայն այն ժամանակաշրջանի յուրահատկությունները, որոնք ապրել ու իր երկերն է արարել բանաստեղծը, այլև՝ տվյալ բանաստեղծի խառնվածքին հատուկ այս կամ այն բնորոշ ծայրահեղությունը: Բայց Թումանյանի բանաստեղծական աշխարհի հետ չփվելիս՝ հաղորդակցվում ենք աշխարհընկալման մի այնպիսի համապարփակ պարզության հետ, մարդկային կյանքն օրորող միջնադարյան օրորոցի միջնադարյան ամփոփող, մի այնքան սիրառատ, ծնողական բարեհոգության ենք հանդիպում, որ ակամայից մոռանում ենք բոլոր այն պայմանական հանգամանքների գոյության մասին, որոնք շատ ու շատ բանաստեղծների «խանգարում» են հավերժ մշտապես ծայրահեղող մնալ:

Բոլոր դեպքերում՝ ամեն մի իսկական բանաստեղծ հավերժի ճամփորդ է, սակայն համուս արդարության հարկ է ասել, որ այսպիսի որակումը, թե՛ նախանձելի, այնուամենայնիվ, Թումանյանի համար մի քիչ մեղմ է ասված: Նա ավելի ճիշտ՝ անհուն տնօրինություն արեց ու հավիտենության մշտնջենական գրուցակիցը դարձավ....

ժողովուրդների վաղնջական երթի մեջ բացառիկ են այն դեպքերը, երբ մի ամբողջ ազգի առավել հավաքական հուզաշխարհն ու կեցողությունը գեղագիտական անմասխաղեպ չափանիշներով է գեղարվեստական խոսքի բազմաթիվ բազմաժանր դրսեւորումներով բարբառի մի եզակի անհատի շուրթերով: Հայ գրականության մեջ այդ մշտաբերուն տառապալն ու անհուն պայծառատեսը, մեր ազգային

երբեք այսքան մեծ չի եղել անկեղծության կարիքն ու կարոտը, ինչպես այսօր, եւ երբեք այսքան ահռելի չափերով չի հայտնվել կեղծիքը, ինչպես այսօր:

Դարավոր կարգերի ու հասկացողությունների հեղաշրջումի օրը, պատմության ահավոր դատաստանի օրը:

Մեծ ալեկոծություններն ու ակնկալությունները ամենքին տեղահան են արել, դուրս են բերել իրենց անկյուններից. ահա-ժողովուրդներն իրենց ունեցած ուժերով հրապարակի վրա են:

Ամեն մարդ շարժվում է, ամեն մարդ խոսում է:

Անշուշտ ան փոփոխ շարժվել այնպես, ինչպես ինքն է կամեցում, եւ խոսել այն, ինչ որ ինքն է մտածում:

Այդպես պիտի լինե՞ր մարդը, եւս առավել այս տեսակ մի ժամանակի առաջ, երբ շարժումը կամ խոսքը կարող է ունենալ այնպիսի հետեւանք, որ ուրիշ ժամանակ անբերական է: Նրա այս խոսքից կամ այն շարժումից կախված է շատ բան:

Եվ հանկարծ... դուք տեսնում եք... Նա խաղ է անում, դերասանություն է անում:

Դերասանությունը գեղեցիկ է բեմի վրա, ուր խաղում են, բայց նա գարշելի է կյանքի մեջ, ուր ապրում են:

Դրա համար էլ բեմի վրա խաղացողները շնորհքով մարդիկ են, իսկ կյանքում խաղացողները՝ ցածր են կեղծավորները:

Նրանք խաղ են անում ամեն տեղ, ամեն բանի հետ, եւ ահա, մեր կյանքն ավելի մման է թատրոնական բեմի, ու այդ բեմը թե՛ փոքր, բայց, տեսե՛ք, որքան դերասաններ ունի....

Իրենց վրա առած զանազան դերեր՝ նրանք մտել են ու խաղում են այս կամ այն ասպարեզում:

Ահա սա՝ ներկայանում է ամեն տեղ որպես չհասկացված ու հալածված գաղափարական գործիչ, մյուսը նշանավոր հերոս է խաղում, երրորդը հրապարակախոսություն է սարքել, չորրորդը բարեգործ է ձեւանում, հինգերորդը գրող է կեղծում, վեցերորդը հանդիսանում է արդեն որպես նախատակ, յոթերորդը գալիս է որպես դատավոր, ամենքին մեղադրելու եւ ամենքից հաշիվ ուզելու....

Ու բնականաբար, չնայելով այսքան շատ գործիչների ներկայությանը, դուք զգում եք, որ ցուրտ է, որովհետեւ չկա անկեղծության

ջերմությունը, զգացմունքի հուրը, որովհետեւ նրանք խոսում են լեզվով, իսկ սիրտները շատ է հեռու, եւ զգվում եք վերջապես:

Սրանք ոչինչ չեն փորում, այլ ցույց են տալի, թե սիրում են: Եվ ինչպես դերասանն ունի իր դերը, որ տանում է, իսկական գործիչն ունի իր խաչը, որ կրում է, սրանք էլ, այս կամ այն գործին կաշեկոծ, փոխանակ գործի ծանրության տակ մտնելու եւ տանելու, իրենք են բարձրանում, հեծնում նրա վրա ու շինում են իրենց էշը:

Եվ այս դերասաններից ամեն մեկն ունի իր էշը, ու միշտ էլ իր էշն է քշում, թեկուզ աշխարհը քանդվի:

Հաճախ սրանց շահատակությունը տեսում է շատ երկար, նայած թե ինչ տեղ են մեյդան բաց արել եւ ով են քանաշավորները կամ երբ են գլխի ընկնելու:

Ու որպեսզի այդ թանաշավոր-ժողովրդի սիրտը շահած լինեն ու բարեկամ պահած, միշտ գոռում են «ժողովրդի» անունը:

Խոսքն ընչի մասին ուզում է լինի, միշտ վերջացնում են «ժողովուրդով»: Ժողովուրդն այսպես է կամեցում....

«ժողովուրդը մեզ հետ է... Ժողովուրդը ձեզ կդատի... Ո՞ր ես, ժողովուրդ, անարգում են քեզ...»:

Այդ հերիք չէ դեռ: Ժողովուրդն էլ են կեղծում:

Իրենց մարդկանցից ոմանց հանդես են բերում կեղծ ստորագրություններով, անգորագետներին իրենց շինած հողվածներով ու ներկայացնում որպես ժողովուրդ:

Տեսե՛ք, ժողովուրդը մեզ հետ է: Դե եկե՛ք ու ջոկեցե՛ք իսկականը կեղծ խելոք լինի, որքան կուզե՛ գոռա, թե կուլտուրական են ես... Նրա գործերը միշտ գետնին կմնան, որքան ուզում է գործիչներ ունենալ:

Կեղծի՞ք ու խաչագողություն՝ ամեն օր, ամեն տեղ, ամեն տեսակի:

Եվ մի ժողովուրդ, որ այսքան կեղծիքներ ու կեղծավորներ ունի, այսքան խարդախներ ու խաչագողներ ունի, չի սիրվի, որքան կուզե խելոք լինի, որքան կուզե գոռա, թե կուլտուրական են ես... Նրա գործերը միշտ գետնին կմնան, որքան ուզում է գործիչներ ունենալ:

Նրա մեջ կատարված հասարակական, թե ազգային գործերը խախտու են միշտ: Նրա ամեն ընկերակցությունը հենց սկզբից իր մեջ ունի քայքայման բոլոր սաղմերը:

1907թ.

իրճվանքով՝ սքանչացել կատարյալի աստվածային առեղծվածով: Չունենալով կարողությունները որեւէ պատկանելի փաստաթուղթ՝ միայն նախանձել կարելի էր համաշխարհային գրականության նրա խոր զգացությունը, այդ գրականության հսկաներին տված աֆորիստիկ բնութագրությունների անվիճարկելիությանը, մեծն ու փոքրը, ճիշտն ու կեղծը, անցողիկն ու հավերժականը միմյանցից զանազանելու նրա անվրեպ հանճարեղությամբ.... Հիանում ու զարմանում ես, թե իր ապրած խառնակ ժամանակներում, որպես հրապարակախոս, որքան ողջամիտ հասկացությամբ է լուսաբանել մեր ազգի առջեւ ծառայած խնդիրները, իսկ անտերության մատնված ազամիջյան թշնամական ընդհարումների մոլուցքը կամխելու համար որպիսի սրտացավ խիզախությամբ է սպիտակ դրոշմ առած՝ սարեւար ընկել... ինչքան ջերմ անմիջականությանը է արձագանքել իր մարդկային միջնորդության ասպարեզած ամեն մի հուսալքված սրտի՝ միաժամանակ հասցրել զանազան ընկերությունների դեկավարը լինել. ոչ միայն՝ խոսքով, այլ նաեւ՝ գործով:

Այսքանից հետո եղել է մի բազմազան ընտանիքի սրբազան հայր, պարտքերի տակ կքած, բայց «լեն ու բոլ» ապրելակերպից, հյուրերից ու խնջույքներից համառորեն չհրաժարվող, անտնտես ու շռայլ, մի «պատուհաս» ամուսին. ժողովրդական հանդիսությունների պատվելի զարդն է եղել ու երջանակառիթ արարողություններին՝ անհաղթելի սեղանապես: Վերջապես նա՝ էր հայ իրականության մեջ երբեւէ եղած, երեւի թե՛ ամենաառողջ գրական միավորումը՝ «Վերնատան» տանտերը, որտեղ հավաքվում էին ժամանակի հասարակական-մշակութային կյանքի այնպիսի կարկառուն անհատականություններ, որոնց անունների թռուցիկ իիշատակությունը մույնիսկ բավական է, որպեսզի ամենամեծ տեսակի հոգին անգամ պատկառանքով լցվի (Աղայան, Դեմիրճյան, Պռոշյան, Աղբալյան, Իսահակյան, Շիրվանզադե, Լեո, Շանթ, Մուրացյան, Մանանդյան...):

Ասում են թե՛ Թումանյանն իր հանճարը տրեք ժողովրդին, տաղանդը՝ գրականությանը: Այս արտահայտության ողբերգական ենթատեքստն այն է, որ իր բազմաշարժ ժողովրդի ցավով շուրջված այդ ամենամարդ հայր երբեք ժամանակ չունեցավ լիաշունչ ապրելու միայն գրականությամբ: Նա չավարտեց իր «Հազարան բլբուլը».... Բայց հայ ժողովուրդը, հանձին նրա, (ի տես աշխարհի) ունեցավ իր Հազարան բլբուլը....

Թումանյանի հիրավի առասպելական հոգին ամփոփել էր համբերության խորհրդին ու ընկերին արեւելքն ու արդարության երդումին հավատարմագրված արեւմուտքը: Նրա խառնվածքում հյուսիսցու խստաշունչ պարզասրտությունը կար ու հարավցու սրտոտ խելահեղությունը: Իսկ ընդհանրապես՝ նա իր բիբլիական ժողովրդի հրեղեն ողջախոությանը օժված մի վճիտ հայ էր, որի մեջ Արարիչն ամբարել էր այն ամենայն առաքինին ու լուսավորը, որով հայ հանճարը մաքառելով փառավորել է իր անկրկնելի պատմությունը....

Թող աշխարհին խաղաղություն լինի, իսկ մեր բազմաառաջ հողագնդին՝ հավերժություն, որպեսզի սերունդները դար ու դարեր «օրհնեն էն սիաթը», երբ «Հայաստանի արգանդը եղավ սրբորեն բեղուն», եւ Հայոց Աշխարհը ինքն իրեն երկնց Լոռվա Դսեղուն....

ՏԻԳՐԱՆ ԳՐԻՈՐՈՅԱՆ
փետրվար 1989թ., ք.Գորիս

ՀՀ ՆԱԽԱԳԱՅԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ - 2013

Նա է ժամանակի ընտրյալը

ՀԱՅԱՅՔ ԱՐՑԱԽԻՑ

Մենք Արցախի հողում ենք: Չմեռ է, ձյունը ծածկել է սար ու ձոր: Եվ ծնեռային Արցախը մեզ դիմավորում է արելի ջերմությամբ, հարազատին հանդիպած մարդու ջերմությամբ: Մենք մեզ զգում ենք ավելի հզորացած ու սրբացած: Ախր այստեղ ռուսներ են պայթել: Այստեղ կռիվ էր: Այստեղ հայի ըմբոստ ոգին էր արթնացել ու ձեռնոց նետել անարդարությանը: Ժամանակի նոր հաշվարկն այս սուրբ հողից է սկսվել: Այստեղ մերոնք նորոգ մի խանդավ հմի են եկել, հասկացել մեկնեկու, ըմբռնել իրար ու միական ծառս ելել: Ու պատմական ճշմարտությունը սուր ու վահան դարձրած նրանք նետվել են թարախապալարը կտրելու: Ես մտովի տեսնում եմ այն երիտասարդին, ով քաղաքական հստակ կողմնորոշիչներով գինված՝ մտավ պայքարի մեջ, որ ժամանակի տերը դարաբաղցին լինի ու նրա ձայնը լսելի լինի աշխարհի բոլոր ծագերում, որ Ղարաբաղի լուսաբացները հայերեն բացվեն: Ես տեսնում եմ այդ երիտասարդին եւ հիշում նրա ուսուցչի՝ վաստակավոր, գերազանցիկ ուսուցիչ Գուրգեն Չայրապետյանի պատմածները: դպրոցում լավ է սովորել, դպրոցի աշակերտների մեջ միշտ տարբերվել է իր կեցվածքով: միշտ հարողկած վզկապով, հագուստով, մաքուր, կոկիկ: Նրա ակտիվությունը սահման չուներ, էներգիայի անսպառ աղբյուր էր Սերժ Սարգսյանը: Հանրօգուտ աշխատանք պետք է կատարեին, ինքն էր կազմակերպում, հանրօգուտ աշխատանքի ուղղվածությունն ինքն էր որոշում, ուսուցիչներին մնում էր դիտել նրա աշխատանքը:

– Գիտեք ինչ, – շարունակում է գրույցը վաստակավոր ուսուցիչը, –

Սերժ Սարգսյանը դպրոցի աչքն էր: Եթե նրա ծնողին դպրոց էինք կանչում, ապա միայն շնորհակալություն հայտնելու համար: Բնավորության հետաքրքիր մի գիծ էլ ուներ. երբ դպրոցից գնում էինք արտադրական պրակտիկայի, նա աչքի էր ընկնում հետաքրքիր իր մոտեցմամբ. օգնում էր աղջիկներին, շատ ու կոպիտ աշխատանքը տղաներով էին կատարում, իսկ մանր-մունրը՝ աղջիկները, եւ դա այնքան աննկատ, որ ոչ ոք չէր նկատում:

Երբ Սերժը զինվորագրվեց հայոց մեծ երազանքն իրականացնելու վեհ ու սրբազան գործին, ու ես նրան տեսա ամբողջներից միացում գոչելիս, կովոզների շարքում, չգարմացա, գիտեի, երբ գա վճռական պահը, նա լինելու է մասսաների հետ, նա լիդեր է լինելու, որովհետեւ դպրոցում արդեն երեսուն էին նրա՝ լիդերին հատուկ, աստվածատուր շնորհքը, կազմակերպչական ջիղը մասսաների հետ աշխատելու ժամանակ: Ֆիզիկա առարկայից արտաժամյա պարապմունք պետք է լիներ: Սերժը եկավ թե՛ ընկեր Չայրապետյան, մի խնդրանք ունեւ, մեր դասարանի աշակերտներից շատերը ռուսաց լեզվից կաղում են, իսկ շուտով ստուգողական աշխատանք պետք է կատարենք, նրանցից շատերը «2» կստանան, թույլ տվեք ֆիզիկայի փոխարեն արտաժամյայի ընթացքում ռուսերեն պարապենք: Նա հանձնվելու մեծ վարպետ էր, ես տեղի տվեցի, ընդառաջեցի նրա խնդրանքին: Մարապետին եւ ռուսաց լեզվից ստացան բարձր գնահատականներ. ուսուցիչը ոչ միայն գոհ մնաց աշակերտներից, այլև ցնցված էր՝ երբ ո՞նց եղավ:

Երբ Սերժին տեսա ինքնապաշտպանական կռիվներում, իսկույն հիշեցի նրա դպրոցական տա-



Գուրգեն Չայրապետյան

րինները. ընկերների հետ երբեք կռիվ չէր անում, այլ խաղաղեցնում էր բոլորին, նա իսկական խաղաղության աղավաղ էր, երբեք չէր թողնի, որ տղաներն արջուրների պես իրար կպնեն: Իմ աշակերտներից յուրաքանչյուրն ինձ համար իմ երեխան է: Ու այդ երեխաների մեջ առանձնանում է Սերժը: Դա ոչ թե նրա համար, որ նա երկրի նախագահ է, այլ նրա համար, որ Սերժ Սարգսյանը մարդուն հարգել գիտի, մարդուն գնահատել գիտի: Նա մարդուն մինչև վերջ լսելու ունակություն ունի: Նա որ մի բան անում է, իր համար չի անում, այլ հայության համար: Այդպես էր նաև դպրոցում: Ինքն իր համար երբեք ոչ մի հարցով ոչ մի ուսուցչի չէր դիմի, այ, երբ խոսքը վերաբերում էր իրենց դասարանին, դպրոցի որեւէ աշակերտի, նա գնում էր մինչև վերջ, մինչև լուծվեր խնդիրը:

Քիչ լռելուց հետո շարունակում է. – Հայաստանում ինչ ունչում

է սիրտս, երբ նրան տեսնում եմ աշխարհի հսկաների հետ: Սեր խոսում աս, տեսեք ինչպես է Արցախի հարցը աշխարհով մեկ բարձրացնում, խոսքով սուր ճոճում Ալիեւի դեմ եւ ճշմարտությունը ջրի երես հանում:

Մի բան էլ հիշեցի: Ինքնապաշտպանական ջոկատներին զենք էր հարկավոր: Սերժ Սարգսյանը ծանոթ լինելով մեր դպրոցի արիստանոցի տեխնիկական հնարավորություններին, մոտեցավ ինձ, թե՛ ընկեր Չայրապետյան, արիստանոցը պետք է դարձնենք զենք արտադրող արտադրամաս, ինչ կարծիքի ես: Նա այսուպեսական որոշում կայացնողներին չէ: Գիտեի, որ մինչև առաջարկ անելը հազար անգամ ծանր ու թեթեւ է արել: Համաձայնեցի: Եվ զենք էինք արտադրում, եւ նորոգում: Հետո դպրոցն ընդունեց փախտակալներին՝ Սերժի խնդրանքով: Սակայն ժամանակն էր արդեն, որ

դպրոցը կատարեր ի վերուստ իրեն տրված առաքելությունը: Այս անգամ ես նրան խնդրանք ներկայացրի: Սերժ Սարգսյանն արագորեն լուծեց փախտակալների հարցը, եւ դպրոցը մտավ մշտականոն իր հունի մեջ:

– Եթե Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը դիմի ձեզ՝ ասելով, ընկեր Չայրապետյան, անձնական մի հարց ասա, լուծեմ, ինչ կխնդրեիր նրանից, – հարցնում եմ ուսուցչին:

– Իմ անձնական խնդիրը լուծված է, – եւ բազմանշանակ ժպտում է:

– Ինչ խնդիր էր, եթե զարտնիք չէ:

– Արցախը հիմա ազատ է, անկախ, հայերեն են կարկաչում մեր աղբյուրները, գետերը: Դա է իմ անձնական խնդիրը, նաեւ աշխարհի բոլոր հայերի խնդիրը, որ լուծում ստացավ Սերժ Սարգսյանի նման տղաների շնորհիվ: Թող երիցս օրհնվեն նրանք, եւ հայոց արգանդը թող միշտ նման հայրենասերներ ծնի:

Դրա համար էլ Արցախ աշխարհից ասում եմ՝ մասնակցեք 2013թ. փետրվարի 18-ի ընտրությանը եւ ձեր ձայնը տվեք Սերժ Սարգսյանին: Նա է ժամանակի ընտրյալը, ժամանակը նրան է ընտրել: Իսկ ժամանակը պետք է ճիշտ գնահատել, ժամանակի ձեռքը բաց չթողնել:

Երկար-երկար խոսում ենք Սերժ Սարգսյանի ընկերների, ուսուցիչների հետ:

Եվ բոլորը միաբերան ասում են՝ չիմանաք, թե նախագահ է եւ նախագահ պետք է ընտրվի, դրա համար ենք Սերժ Սարգսյանի մասին որվատանքով խոսում, ոչ: Բոլոր ժամանակներում նրա մասին միշտ այդպես զովասանքով են արտահայտվել: Արցախցին, այն էլ իմացեք, կրվում առյուծ է, իսկ խոսքում վատ է, ասած խոսքն էլ քսքսիմայի արժեք ունի:

...Արդեն երեկո է, Ստեփանակերտն ընկղմվել է լույսերի խաղող բազմերանգ ծովում եւ, կարծեք, տոնածառերն աշխարհին ասում են՝ արցախցին կա ու կլինի, այս հողը հերոսների արյամբ է ձեռք բերվել, ու այս սերունդն արյամբ ձեռք բերածը երբեք չի գիշի...

ՍԱԿԱՐ ԿՍԵՆՈՒՅԱՆ

Որքանով են իրականացվել Սերժ Սարգսյանի 2008թ. Նախընտրական խոսքումները

Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանի՝ ՀՀ կառավարությանը 2012թ. դեկտեմբերի 26-ին հղած գրությունից տեղեկանում ենք, որ 2008-12թթ. Սյունիքի մարզում որոշակի աշխատանք է կատարվել Սերժ Սարգսյանի նախընտրական հանդիպումներում (2008թ.) արձարված խնդիրների լուծման ուղղությամբ:

Ահավասիկ՝ Սերժի-Կապան նոր միջպետական ճանապարհից դեպի Նոնաձոր տանող 9կմ ճանապարհահատվածի կառուցում, սահմանամերձ համայնքի տրանսպորտային կապի ապահովում: Օբյեկտի կառուցման համար անհրաժեշտ է մոտ 3,5 մլրդ դրամ: ՀՀ 2012թ. պետական բյուջեով այդ նպատակով նախատեսվել է 180,0 մլն դրամ: 2012թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ ավարտվել է տարվա համար պայմանագրով նախատեսված 160,967 մլն դրամի շինարարական աշխատանքների կատարումը:

Միջպետական Ա-2 մայրուղու Գորիս քաղաքով անցնող ճանապարհահատվածի վերանորոգում: ճանապարհահատվածի վերանորոգման նախագծանախաշվարկն փաստաթղթերով նախատես-

ված էր հատկացնել 800,0 մլն դրամ: Ծրագրի իրականացման համար կապալառու՝ «Ռսմար» ՍՊԸ-ի կողմից 2009թ. կատարվել են տարեկան ծրագրով նախատեսված 216,7 մլն դրամի շինարարական աշխատանքներ, իսկ 2010թ. պետական բյուջեով ծրագրի իրականացման համար գումար չի նախատեսվել: Մայրուղու մնացած հատվածի հիմնամորոգումն ընդգրկվել է Սյունիքի մարզի 2012-2014թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրի եւ ՀՀ 2012թ. պետական բյուջեի հայտերի նախագծերում, սակայն տեղ չի գտել հաստատված բյուջեում: Համապատասխան ֆինանսական միջոցների հատկացման դեպքում կիրականացվի ծրագրի մնացած մասը:

Խանձախի համայնքի թվով 255 տնտեսության գազիֆիկացում: Խանձախի համայնքի գազիֆիկացման ծրագիրը «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրի վերլուծության եւ կառավարման գրասենյակ» (IFAD) -ի կողմից ընդգրկվել է գրասենյակի 2012թ. ծրագրում: Հուլիս ամսում կայացել է շինարարական աշխատանքների իրականացման կապալառուի

ընտրության միջազգային մրցույթ, եւ հաղթող է ճանաչվել «Եվրոպրոֆայլ» հայ-ֆրանսիական կազմակերպությունը: 2012թ. հոկտեմբերի 15-ից սկսվել է օբյեկտի շինարարական աշխատանքների իրականացումը:

Վաղատուր համայնքի թվով 105 տնտեսության գազիֆիկացում: Վաղատուր համայնքի գազիֆիկացման ծրագիրը «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրի վերլուծության եւ կառավարման գրասենյակ» (IFAD) -ի կողմից ընդգրկվել է գրասենյակի 2012թ. ծրագրում: Հուլիս ամսում կայացել է շինարարական աշխատանքների իրականացման կապալառուի ընտրության միջազգային մրցույթ, եւ հաղթող է ճանաչվել «Եվրոպրոֆայլ» հայ-ֆրանսիական կազմակերպությունը: 2012թ. հոկտեմբերի 15-ից սկսվել է օբյեկտի շինարարական աշխատանքների իրականացումը:

Խոզնավար համայնքի թվով 98 տնտեսության գազիֆիկացում: Խոզնավար համայնքի գազիֆիկացման ծրագիրը «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրի վերլուծության եւ կառավար-

ման գրասենյակ» (IFAD) -ի կողմից ընդգրկվել է գրասենյակի 2012թ. ծրագրում: Հուլիս ամսում կայացել է շինարարական աշխատանքների իրականացման կապալառուի ընտրության միջազգային մրցույթ, եւ հաղթող է ճանաչվել «Եվրոպրոֆայլ» հայ-ֆրանսիական կազմակերպությունը: 2012թ. հոկտեմբերի 15-ից սկսվել է օբյեկտի շինարարական աշխատանքների իրականացումը:

Սպանդարյան համայնքի թվով 130 տնտեսության գազիֆիկացում: Սպանդարյան համայնքի գազիֆիկացման ծրագիրը «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրի վերլուծության եւ կառավարման գրասենյակ» (IFAD) -ի կողմից ընդգրկվել է գրասենյակի 2012թ. ծրագրում: Հուլիս ամսում կայացել է շինարարական աշխատանքների իրականացման կապալառուի ընտրության միջազգային մրցույթ, եւ հաղթող է ճանաչվել «Եվրոպրոֆայլ» հայ-ֆրանսիական կազմակերպությունը: 2012թ. հոկտեմբերի 15-ից սկսվել է օբյեկտի շինարարական աշխատանքների իրականացումը:

Անգեղակոթ համայնքի թվով 380 տնտեսության գազիֆիկացում: Գազիֆիկացված Անգեղակոթ համայնքում պոտենցիալ բաժանորդների թիվը 380 է: 2012թ. դեկտեմբերի 28-ի դրությամբ փաստացի բաժանորդների թիվը 177 է:

Խնձորեսկ գյուղի ակունքի շենքի հիմնամորոգում: 2012թ. նոյեմբերի 1-ի դրությամբ ավարտվել է շինարարական աշխատանքների իրականացումը:

Անգեղակոթ գյուղի դպրոցի շենքի վերանորոգում: 2012թ. դեկտեմբերի 25-ի դրությամբ ավարտվել է շինարարական աշխատանքների իրականացումը:

Անգեղակոթ գյուղի մշակույթի տան վերանորոգում: 2012թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ ավարտվել է շինարարական աշխատանքների իրականացումը:

Մեղրի քաղաքի հիվանդանոցի շենքի վերանորոգում: ՀՀ կառավարության 2010թ. սեպտեմբերի 3-ի N1172-Ն որոշմամբ նախատեսվել է մինչև 2012թ. ավարտը «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի համար կառուցել նոր շենք: 2012թ. հունիսի 1-ի դրությամբ ավարտվել են նախագծանախաշվարկի փաստաթղթերի կազմման աշխատանքները: Համաշխարհային բանկի սահմանած ընթացակարգի համաձայն առաջիկայում կհայտարարվի կապալառուի նոր մրցույթ: ■

2008-13ԹԹ. ԳԼԽԱՎՈՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻՑ ՄԵԿԸ



ՀՀ Նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանին

ՊԱՏՎԻՐԱՆ

ՈՌԲԵՐՑ ԳՐԻԳՈՐՅԱՆ
(ԷԶԱՆԱՆՑԻ)

Հանրակրթության բնագավառում, խորհրդային կրթական համակարգի՝ տակավին համառորեն գոյատևող հետմախրքի վրա, բարեփոխումներն ու նորամտություններն ուրվագծել են մեր նորագող երկրի կրթահամակարգի ուրույն համապատկերը: Նոր ժամանակներում դպրոցի եւ ընտանիքի համագործակցության պահանջարկը, ակներեւ, առաջնահերթ կարեւորություն ունի, սակայն գործնականում, կարծես, անտես է առնվել: Երեխայի իրավունքն ու պարտականությունը համամարդկային ըմբռնում ու չափանիշ են, սակայն դրանք ընտանիքի ու դպրոցի փոխհարաբերություններում իրավական-փաստաթղթային կոնկրետ արտացոլում չունեն: Թեպետ հանրակրթության օրենքի 26, 28 հոդվածները տարփողում են սովորողների եւ ծնողների իրավունքներն ու պարտականությունները, դրանց իրացման ու գործադրման եղանակներն ապրիորի են ու չեն կոնկրետացված: Դպրոցն ու ընտանիքը՝ երկուստեք, կողմնորոշվում են ազգային-ժողովրդական մանկավարժության ավանդույթներով: ԿԳ նախարարության երբեւէ մշակած՝ դաստիարակության վերաբերյալ հայեցակարգը նոր ժամանակներում քննություն չի բռնում:

Հանրապետության սահմանները՝ ավելի պաշտպանված ու անվտանգ

Քաղվածք Սերժ Սարգսյանի ելույթներից

Հայաստանն ու Արցախը պատերազմ չեն ցանկանում, սակայն բոլորը պետք է վստահ լինեն՝ մենք արժանապատիվ պատասխան կտանք նետված ցանկացած նարտահրավերի:

– Այսօր ունենք կայացած եւ մարտունակ բանակ, որն ապահովում է մեր հայրենիքի անվտանգությունը:

– Ապահով հայրենիքի թիվ մեկ գրավականը հայոց բանակն է:

– Չինված ուժեր չունենալը թերեւս ոչ մի ժողովրդի կյանքում չի ունեցել այնպիսի ծանր ու ողբերգական հետեւանքներ, որքան մեզ համար: Գուցե սա է պատճառը, որ մեր բանակը ստեղծման օրվանից զգացել է մեր ժողովրդի առանձնահատուկ վերաբերմունքը: Ստեղծված օրվանից եղել է ժողովրդական բանակ:

Ավելորդ չէ հիշել, որ մենք՝ որպես ազգ եւ հասարակություն, մտադրություն չենք ունեցել ստեղծելու եւ պահելու այնպիսի բանակ, ինչպիսին ունենք այսօր: Մենք ստիպված ենք եղել կազմակերպելու մեր ուժերը մեզ պարտադրված պատերազմում պաշտպանվելու համար: Մենք ստիպված ենք եղել կազմակերպելու՝ կանխելու համար այն կոտորածներն ու էթնիկ գտումները, որոնք մեթոդաբար իրականացվում էին մեր եւ աշխարհի աչքի առաջ: Ավելին՝ մեզ հրապարակավ եւ պաշտոնապես սպառնում էին նոր կոտորածներն ու նոր էթնիկ գտումներով: Այդ սպառնալիքներն ավելի քան իրական էին: Դրանց մի մասը նույնիսկ իրականացվեց ինչպես այդ օրերին, այնպես էլ հետագայում:

Ահա այս ճակատագրական պահին էր, որ մեր ժողովուրդը գրեթե գոյից ստեղծեց իր բանակը: Պատերազմի, շրջափակման ու սովի պայմաններում հայ ժողովուրդը ստեղծեց իր բանակը՝ անելու համար միայն մեկ նախադասություն. «Բավական է»: Հայի հետ եւ աշխարհում որեւէ մեկի հետ չի կարելի խոսել յաթաղանի եւ սպառնալիքների լեզվով:

Հայոց բանակը վեր խոյացավ այնպես, ինչպես չէր հաշվարկել ու չէր կարող հաշվարկել հակառակորդը: Մարտի դաշտ իջավ Կարմիր Վարդանների մի այնպիսի սերունդ, որի գոյության մասին գաղափար չունեին ոչ հակառակորդի քարոզչությունը եւ ոչ էլ այդ քարոզչությանը մոլորվածները: Իջավ ասելու. «Բավական է»:

Ընկան հերոսներ, ովքեր իրենց կյանքի գնով մեզ վերադարձրին ապրելու մեր իրավունքն ու մեր արժանապատվությունը: Մենք խոնարհվում ենք նրանց հիշատակի առջեւ, որոնց խիզախությունը այսօր մեր բանակն արժանիորեն կոչում ենք հաղթական բանակ: Ուժ, որ պարտադրեց հակառակորդին զինադադար եւ հարաբերական խաղաղություն: Ուժ, որ պահպանում է այդ խաղաղությունն ու կայունությունը մեր տարածաշրջանում, որ եղավ ու լինելու է Արցախի հուսալի թիկունքը:

Իմ համոզմունքն է, որ Արցախի եւ Հայաստանի դեմ պատերազմը սանձազերծվել է եւ պարբերաբար բորբոքվել է հիմնականում մեկ պատճառով: Մեր ուժը եւ ներուժը թերագնահատել են: Իսկապես մտածել են, որ կարելի է հեշտ եւ արագ հաղթանակ տանել: Այս թերագնահատումը շատ ծանր է նստել բուրի վրա, ունեցել է ողբերգական հետեւանքներ թե՛ Հայաստանի, թե՛ Արցախի, թե՛ Ադրբեջանի ժողովուրդների համար:



Հայաստանի զինված ուժերն այսօր այլևս դժվար է թերագնահատել: Սա լրջագույն կռվան է՝ հօգուտ խաղաղության պահպանման: Հեշտ եւ արագ պատերազմների մասին հեքիաթներին այլևս ոչ ոք չի հավատում: Մենք պատերազմ չենք


սկսել ու չենք սկսելու: Սա ակնհայտ է: Նույնիսկ այն պահերին, երբ կռվի դաշտում ունեցել ենք միանշանակ առավելություն, մենք չենք դադարել պնդել, որ Արցախի հարցը չունի ռազմական լուծում:

Դպրոցի ու ընտանիքի համագործակցության չափորոշիչները, անորոշ լինելով, ի ցույց չեն դնում աշխատանքի արդյունավետությունը: Ավելին. ի հայտ է եկել հակադարձ երեւույթ՝ կան ընտանիքներ, որոնք դժկամում կան իրաժարվում են կրթօջախի հետ համագործակցությունից: Մինչդեռ գիտունակ սերունդ դաստիարակելու առաքելությունը դպրոցն առանց ընտանիքի կենսագործելի զորու չէ:

Խնդիրը տարողունակ է, եւ լուծումը, հարկավ, ապագայի մեջ է: Խորհում եմ, որ դպրոցի եւ ընտանիքի համագործակցության մշակույթ արարելու համար կարելի է ընդլայնել ԿԳ նախարարության գործունեության տիրույթը՝ այն վերակազմակերպել որպես կրթության, ընտանիքի եւ գիտության նախարարություն:

Ձերդ գերազանցություն, այս դիտարկումը նախապատրաստել էի մեր Քաջարանամերձ գյուղում, որտեղով անցաք Դուք ուղեկցողներով: Գյուղաբնակի շփոթվածությամբ չկողմնորոշվեցի՝ ո՞ւմ համձնել: Շարասյանը հետեւող լրագրողական խումբը՝ մեր «Այունյաց երկիր» թերթից, փարատեց իմ երկչոտությունը:

Եղերանայր, մի արտասովոր ինձնից թաքուն, Եղերանայր, ես իմ մահը արդեն մեռա...



Լուսանկարը՝ Կարեն Անտոնյանի

Նրա հանճարը հերիքում էր բոլորին

Աճաճանակ մահը մեզ-նից խլեց 53 տարին դեռ չբոլորած մեր լավագույն գործընկերոջը՝ սիրված գրող, գրականագետ, փիլիսոփա, բանասիրական գիտությունների դոկտոր, ՀԳՃՀ Կապանի մասնաճյուղի ընդհանուր ճարտարագիտական կրթության ֆակուլտետի դեկան Վաչե Դապիկի Եփրեմյանին:

Հունվարի 29-ի առավոտից տարածված գույժը ցնցեց Կապանի մասնաճյուղի ողջ կուլեկտիվին. նախ սարսափելի էր որպես լուր, հետո՝ որպես փաստ: ՀԳՃՀ Կապանի մասնաճյուղը կորցրեց մարդկային մեծ արժեք՝ ինքնատիպ անձնավորության: Կորուստն ահռելի է: Մեզնից անժամանակ հեռացավ մեր մեծ ընկեր, բարեկամ, գիտնական Վաչե Եփրեմյանը:

Ինչքան էլ ցավալի է, այլևս մասնաճյուղի պատերի ներսում չի լսվելու ինքնատիպ հունորով, երկաթյա տրամաբանությամբ լեցուն սիրելի Վաչեի ցանկալի խոսքը:

Վաչե Եփրեմյանը՝ իր կյանքն ու հոգին անմնացորդ նվիրելով աշխատանքին, ապրում էր ամեն մի օրով եւ ապրեցնում շրջապատողներին իր խորհուրդներով ու խորհմաստ մտքերով:

Ծնվել է 1960 թվականի հունիսի 11-ին Կապան քաղաքում: 1982 թվականին ավարտել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետը, 1987 թվականին՝ համալսարանի հայոց բանասիրության ֆակուլտետի ասպիրանտուրան: 1988 թվականին Հայաստանի գիտությունների ակադեմիայի Մ.Աբեղյանի անվան գրականության

ինստիտուտում պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը եւ ստացել գիտության թեկնածուի գիտական աստիճան: 2008 թվականից բանասիրական գիտությունների դոկտոր է, ԵՊՀ գիտական աստիճանների շնորհիվ «Գրականության տեսություն» մասնագիտական խորհրդի անդամ: Հայաստանի գրողների միության անդամ է:

1987-95թթ. Կապանի պետական դրամատիկական թատրոնի գրական բաժնի վարիչն էր:

1994թ. հիմնադրել է «Կապան» («Կապանցիներ») շաբաթաթերթը, որի գլխավոր խմբագիրն էր մինչեւ 2001թ.:


1999 թվականից աշխատանքի է անցել ՀԳՃՀ (Պոլիտեխնիկ) Կապանի մասնաճյուղում՝ սկզբում՝ սոցիալ-քաղաքական առարկաների եւ լեզուների ամբիոնի վարիչ, 2004 թվականից՝ ընդհանուր պատրաստականության դեպարտամենտի վարիչ, 2009 թվականից ընդհանուր ճարտարագիտական կրթության ֆակուլտետի դեկան՝ համատեղությամբ մնալով ամբիոնի վարիչ:

Վաչե Եփրեմյանը 3 մենագրության, 2 գիտական թարգմանության եւ ավելի քան 50 գիտական հոդվածի հեղինակ է: «Անտարես» հրատարակչության կողմից հայտարարված մրցույթում նրա հեղինակած «Կոկտեյլ դեկտեմբերի 21-ով կամ տարօրինակ

տարեգրություն» պատմվածքը 2012 թվականին ճանաչվել էր տարվա լավագույն պատմվածք:

Նա դեռ երիտասարդ էր, կյանքով լեցուն, ուներ բազում ծրագրեր, եւ նրա մահը ոչ միայն կորուստ էր ՀԳՃՀ Կապանի մասնաճյուղի, գրական աշխարհի, այլեւ երկրի մտավորականության համար:

ՀԳՃՀ Կապանի մասնաճյուղի պնօրինությունն եւ պրոֆեսորադասախոսական անձնակազմ



Լուսանկարը՝ Կարեն Անտոնյանի

Հայ գրականագիտությունը ծանր կորուստ կրեց: Հունվարի 28-ին՝ 53 տարեկանում, Կապանի իր տանը հանկարծամահ եղավ գրականագետ, մշակութաբան, բանասիրական գիտությունների դոկտոր Վաչե Եփրեմյանը:

Վաչե Եփրեմյանը ծնվել է 1960 թվականի հունիսի 11-ին Կապան քաղաքում: 1982-ին ավարտել է Երեւանի պետական համալսարանի բանասիրության ֆակուլտետը: 1989-ին ստացել է բանասիրական գիտությունների թեկնածուի, 2008-ին՝ «20-րդ դարի հայ գրականություն, մշակութաբանական ենթատեքստեր» աշխատության համար, բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

2012-ից Հայաստանի գրողների միության անդամ էր:

Հեղինակ է գիտական երկու՝ «Զգրված գրքի ծանոթագրություններ» (2008), «20-րդ դարի հայ գրականություն, մշակութաբանական ենթատեքստեր» (2008), գեղարվեստական մեկ՝ «Հավելված» (2012) բանաստեղծական ժողովածուի, ինչպես նաեւ ավելի քան 50 հոդվածների եւ ուսումնասիրությունների: Տպագրության ընթացքում էր նրա «Բնագիր եւ մեկնություն» աշխատությունը:

Վաչե Եփրեմյանի հոդվածներին ու հրապարակումներին բնորոշ էին գրականության պատմության լայն ընդգրկումը, մշակութաբանական-փիլիսոփայական ուղղվածությունը, հայ գրականության թաքուն ենթատեքստերը վերհանելու հմտությունը:

Նա դեռ ճանապարհ ուներ անցնելու, եւ շատ մտահոգումներ կիսատ մնացին:

Սակայն այն, ինչ հասցրեց անել, նրա տաղանդի վկայությունն է, նրա մշտանմա հանգրվանը հայ գրականագիտության մատյանում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

Դժուար չէ Դժուար փոխարինել

Խուսարուփի սլացքն ի վեր համբառնած այր մի...

Կապանա տունը, բանասիրական երեւանը, Սյունիքի գրապաշտ սփյուռքը ծանր կորուստ ունեն. սրտի վրահաս կանգը շիջեց վաչեփրեմյանական իմաստապարզեւ հրացույրը: Բոլոր ճանաչողները, մխիթարանքին հուսալով, փնտրտուք են սկսել նրա ստեղծագործությունների խորախորհուրդ էջերում: Ինչո՞ւ էր քանքարապաշտ մեր հայրենակիցը գեղապատկեր խորհում երկրայինի ու երկնայինի սահմանին: «Մի փետուր ընկավ ափերիս մեջ, կվերադառնաս գարնան սկզբներին՝ Կամ վարդի տեսքով, Կամ թռչնի նման: ...Մահն, ի վերջո, սիրո տարբերակ է: Ամենաքիչ մահը պատմության մեջ է: Որովհետեւ պատմությունը աշխարհի ու մեր միջեւ չափվող տարածությունն է»:

Բանասիրության դոկտոր Վ.Եփրեմյանը լույս աշխարհ է եկել 1960-ի հունիսի 11-ին, Ղափանում. որդի՝ Կարմիր դարում հանրապետի բռնադատված Փափագի եւ Մարուսայի: Սերուն է Կովսականի հինավուրց Մագրա-Մացրու գյուղի համբավանուն գերդաստանից:

Նորոգ հանգուցյալը սովորել է ԵՊՀ-ում, ավարտել ասպիրանտուրան, գիտությունների թեկնածու է 1988-ից, դոկտոր՝ 2008-ից, ընդամին՝ ԵՊՀ գիտական աստիճանները շնորհող՝ գրականության տեսության խորհրդի անդամ էր:

1987-95թթ.՝ Ղափանի դրամատիկական թատրոնի գրական բաժնի վարիչ, 1994-2000թթ.՝ «Կապան» (հետո՝ «Կապանցիներ») թերթի գլխավոր խմբագիր, 1999 թվականից՝ ՀՀԳԿ Կապանի մասնաճյուղի սոցիալ-քաղաքական առարկաների եւ լեզուների ամբիոնի վարիչ, ապա՝ ընդհանուր ճարտարագիտական կրթության ֆակուլտետի դեկան: 2012 թվականից ՀՀ գրողների միության անդամ էր:

Երեք հիմնարար մենագրության, 50-ից ավելի գիտական հոդվածի հեղինակ է: Լավագույն պատմվածքի մրցանակակիր է ճանաչվել 2012թ.:

Իր իսկ բառերով՝ «Լուսավոր մարդկանց կենսագրությունը թվերի փառահանդես ու նկարների հավաքածու է: Հայացք է, Չասված Բառ, Ասված Բառաշարի մեջ լինող լռություն, լիքը-լիքը հոգի, Միայնակին պաշարած՝ ցավ պատճառող ամայություն»: Այսպես ճառագուն էր նորահայտ իմաստասերի խոհերով, որոնք գուցե կային հազար տարի առաջ կամ լինելու են հազար տարի հետո, եւ մեկը պեղելու-վկայակոչելու է 52-ամյա Վաչեին: Ու թերեւս քչերը հաշտ ու անկռիվ ներեն, որ հազարին սիրելու փոխարեն չնվիրաբերվեց մեկին ու չշառավիղվեց. «Օ, կործանված սերեր, բոլորն էլ անուն են ունեցել...»:

Անթաքույց մեծատաղանդ էր: Բանասիրության մեջ կամխորոշեց-ուրվագծեց վաչեփրեմյանական՝ ապագային միտված ինքնատիպ դպրոցը: Նրա համախոհ գրուցակիցը լինելու համար անհրաժեշտ էր դույզն-ինչ ծանոթ լինել համաշխարհային պատմությանը, մշակութաբանությանը, գիտության արդի զարգացումներին ու գրականության մեծերի ստեղծագործություններին: Իր քանքարի բացահայտման առումով նա բարդ ու մտորելի էր, ինչպես հյուլեական միջուկը, գալակտիկական խռոչը, փիլիսոփայական մտքի փայլատակունդ երկրի որեւէ ծագում:

Նրա գրավոր խոսքը մեր նորացող հայրենիքի համար արժեւոր էր գեների պես՝ հայկականության համաշխարհային ճանաչման ասպարեզում: «Գիրքն ամեն լինողի ճակատագիրն է: ...Բանաստեղծությունը փորձ է՝ ընթերցելի դարձնելու երկնքում գրառված ճակատագրերը: Լռությունը, Բանաստեղծությունը, Մշակույթն անսկիզբ են ու անվերջ»: Ակներեւ՝ իր թերատված կենաց ճանապարհի օրերից մեկուն մարգերեացել էր՝ ինքն էլ անսկիզբ ու անվերջ է...

ՈՐԲԵՐՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ
(ԷՋԱՆԱՆՑԻ)

Լռութայան ծանոթագրություն


...այսպես չպետք է լիներ, Վաչե Եփրեմյան, Վաչե, Վաչիկ, առավոտ ծեփն վատ երազի արթուն շարունակության պես քո ու մեր եղբայր Ավագի՝ «ախպերս մեռավ, մարդիկ, Վաչիկս, Վաչե Եփրեմյանը» սարսաղզեցիկ գույժն ուրիշ նշանաշար պետք է ունենար, թեկուզ էլի գույժ, գոնե ասեր՝ «ախպերս մեզ լքեց ու Ազոավաքարում փակվեց, մարդիկ», որովհետեւ քեզնից սպասում էինք, որ անսպասելի գնալու ես, որովհետեւ քեզնից սպասում էինք, որ էլ ավելի ես մեռնալու, բայց գոնե մի Համբարձման գիշեր հովվին ընծեմված պատեհության պես մի պատեհություն էլ մեզ շնորհելու հույսն ունեինք, Վաչիկ...
...այսպիսի Լռություն քեզնից չէինք սպասում, այլ, Հեռացումի այսպիսի ե-

կարգ քո Տեսակի համար չէիր վկայել այր...

...ու ցորենը մասուրի չափ, ու գարին ընկույզի չափ մի՞թե չեն դառնալու, մի՞թե Հեռանալու չափ անհավատ էիր դարձել մի հավատի հանդեպ, որ դու էիր սերմանել փորձում, մի՞թե այդքան անբնագիր էին մեր ժամանակները, որ անՄեկնություն որոշեցիր թողնել, Վաչիկ...

...մի՞թե չգիտեիր կամ մի՞թե անգիտացար, որ քո Տեսակի այստեսակ Լռությունը, որ քո Տեսակի այստեսակ Հեռացումն է խրվելու չափ փխրեցնում հողը... մի՞թե Փոքր Սիերին դադարել էիր սիրել, Վաչիկ...

ԱՐՔՄԵՆԻԿ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
«Գրական թերթ»
1 փետրվարի 2013թ., N1



http://i.kim.hayastan.free.fr

«Տեղահան նժարներ...»

Այս ժամանակները... տագնապների այս խուլ ու համր երկունքը: Մտածումների բեռն ծանրությանը հակադիր՝ ճշմարիտ արժեքների նժարի թեթեւաւալ-բարձրանալը... Այս թվացյալ վագրի մեջ՝ ընդարմացման միապաղաղ զաղջություն-գոլությունը, որ սառնությունից էլ վատթար է, երբ օրեցօր փոքրացող ողջամտությունը մի կերպ, հագիվիազ է կարողանում ճշմարիտ ու վաղանցիկ արժեքների նժարները պահել հավասարակշիռ:

Ասում են... տեսնես՝ Կապանը զգո՞ւմ է իր մեծերի կորուստը, կորստի մեծությունը... իր մի քիչ որբանալը, մի քիչ աղքատանալը... մի քիչ շնորհից ընկնելը:

Մենք երբեմն մտնում ենք եկեղեցի՝ ապաշխարանքի փուր-նշխարներ ենք տանում (կամ նրանք են մեզ տանում), բայց խորանում արդեն խնդրառու-պահանջատեր ենք դառնում, իսկ մարդ-եկեղեցու խորան մտնո՞ւմ ենք, նայո՞ւմ ենք

ներս. երբեւէ...

Կյանքից դուրս վիճակներ են մեզ թվում տաղանդավոր մարդիկ, անսովոր ու անհասանելի, ակնածելի ու պատկառելի (վերնահարկը դատարկների համար գուցե եւ՝ քամահրելի):

Կենտրոնահեռ են թվում բազմուղեղ այս դրսեւորումները, բայց իրականում կենտրոնամետ են ավելի, քան մնացածները: Չորավոր արմատների շնորհիվ է, որ կարողանում են ծավալվել ու տարածվել, մեզ համար անհասանելի հեռուն գնալ: Ու նրանց ձեռաց ու գործարար է նաեւ, որ վաղանցիկ ու ճշմարիտ արժեքների նժարները պահվում են հավասարակշիռ... զուգահեռաբար էլ՝ փրկում՝ մեր մարզն ու քաղաքն իրենց ծանրակշռությամբ, մեր երեսը պարզ անելով, մեր ոգու սովը մեղմելով...

Շատ մոտիկից ծանոթ չի Վաչե Եփրեմյանին, այդ տաղանդավոր ու եզակի մարդուն: Բայց միշտ փայլալից են մարդու այդ

А свет остался

Ваче Епремяну посвящается !

29 января...

С самого утра валит непрекращающийся снег, словно предупреждая о чем-то. Как бы не хотелось остаться дома, приходится спешить на работу. Все так же бегут в школу дети, по улицам едут такси. Обычные будни... Однако известие о безвременной кончине всеми любимого Вачика заставило встряхнуться всех.

Странная и несправедливая закономерность - ранняя смерть лучших коснулась и его. Но смириться с этим нелегко. Нелегко тем, с кем он встречался на улице и поражал обостренным чувством юмора и тем, с кем ему приходилось работать в коллективе и удивлять их каждый день и каждый час. Его любили, уважали, прощали слабости, потому что знали - в нем нет ни капли зла, ни спеси и гордыни. В своем сердце и крови он нес благородный дух, болея страданиями и недугами знакомых и близких. А живя в окружающем обществе, он переживал и мучался за жизнь людей вне своих собственных, личных обстоятельств.

Несмотря на свой разум и научные достижения, он был абсолютно прост и легок в общении, неимпозантен и невероятно остроумен. Последнее проявлялось почти в каждом слове. Его глубокий внутренний мир бил горячим ключом. Это видели и осознавали все, хотя некоторые не желали признавать... Но он продолжал жить с благородством и беззлобием в душе и неприязнью ко всему противоречащему его идеалам. Честный и мужественный, он не робел и не отступал перед правдой, находил ее и отстаивал любой ценой, противясь унижительной лжи и фальши. Он имел смелость самостоятельно мыслить и вслух выражать свои мысли! Он был самим собой: единственным неповторимым и незаурядным!!!

Бездонные, грустные глаза часто при встрече с людьми озарялись, излучая исключительный свет. Его уже нет с нами. А свет остался...

Нуне Геворкян

Ու ցավն էլ է բոլորինս...
Պիտի այդպես լինի:
Պարտավոր է՝ այդպես լինել...
ՍԱՐԻ ԱՆԱՔԵԼՅԱՆ

Կոկորեյլ՝ դեկտեմբերի 21-ով եւ մի քիչ ժամանակագրությամբ

ԽՈՒՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Այդ օրը կենդանիներն ժամանակն ավարտվելու էր: Տասներկու տարի խոտում էին դրա մասին, հողվածներ ու գրքեր էին տպագրվում, ավագ դպրոցի դասատուները աստղագետների ու պայծառատեսների բնույթները քամուն էին տալիս, հավատում-չէին հավատում, հավատալու դեպքում հեզմանքն անպակաս էր, երբ չէին հավատում, ապա հառնում էր Կարմիր Պրոֆետուրան գերագնացությամբ ավարտածի բուք, տապարով շինված դեմքը... ժողովուրդն իրոք չէր հավատում: Ամեն ինչ տակնուվրա եղավ, երբ առավոտյան Յեղիմակը հեռուստատեսությամբ ունեցավ եւ հաստատեց, որ կենդանիներն ժամանակն ավարտվելու է: Շատերն անմիջապես նետեցին իրենց ժամացույցները, որ մնացյալ ժամանակը հավերժություն թվա, ոմանք էլ կանգնեցրին ժամացույցի սլաքները, որ ստեղծվի այն տպավորությունը, թե հավերժություն ասվածը մեկ օրն է որ կա: Ապրելու համար միշտ էլ մեկ օր է տրվում, իսկ հաջորդ օրերը թաքնվում են գաղտնիքի պատյանի մեջ: Ասել է թե՛ մարդիկ միշտ մեռնում են հաջորդ օրը:

Յեղիմակի ելույթից հետո երկրի սովորական մարդիկ չհնացան՝ շփոթվե՞ն, թե՞ շարունակեն թիթեռավայել կյանքը: Քիչ հետո ուշքի եկան եւ որոշեցին երեխաներին հեռու պահել հնարավոր խառնաշփոթից: Հոգեվարք ապրող ժամանակից անտեղյակ երեխաներն էլ շարունակեցին անեծօրյա ծվլոցով տունտունի կամ քարկտիկ խաղալ, քաշքշել իրար մագերից, ավագե կոլոկներ շարտել անդուր անցորդների վրա: Որ երեխաներն իրոք անտեղյակ էին, հասկանալի եղավ այն պահին, երբ բակում խաղացող երեխաներից մեկը գլուխը թեթեց իրենց պատշգամբի կողմը եւ ծղրտաց՝ «մա՛մա՛մ, սոված ե՛տե՛ն»...

Պատշգամբների բազրիքներին կոթնած, պատուհանագոգերին հենված՝ երեխաների խաղին հետևող ծնողներն, ըստ երեւույթին, ավելի խաղաղ էին, քան նախորդող տասներկու տարվա ընթացքում: Այլևս հարկ չկար մտածելու, թե երեխան մեծանա՞ ի՞նչ է դառնալու, միևնույն արդիվը ո՞ր օլիգարխի թոռան հետ ամուսնանա, որ կյանքը դրախտին մանավի, այլևս չէին ջղայնանում բալիկների՝ երեք օր առաջ գնված հագուստի ցեխտվելուց... Երեխաներն այլևս իրենց ապագան չէին: Ապագան այլևս չէր լինելու:

Կյանքն անսպասելի մաքրվել էր ձեռակառույցներին: Խորեւանի տրաքացները ծածուկ բաղձանք փայփայել, ուրիշի կնկա վրա աչք տնկել, ընտանեկան ալբոմը խցկել հյուրերի գիրկը... Անգամ անհասկանալի քաղաքագետներն ու անչափ հասկանալի քաղաքական գործիչները դադարեցրին գլոբալ հարցադրումներ

պարունակող բանավեճերը, որոնք իրականում միշտ էլ ուղղված էին անձնական կենցաղի բարելավմանը, նույնիսկ նրանք հասկացան, որ արդեն ոչ մի նշանակություն չունեն ինքնորոշման իրավունք, անկախություն, տարածքային ամբողջականություն եւ նման կարգի բաները: Պարզվեց՝ դրանք ապագայի չլինելու դեպքում կատարյալ անհեթեթություններ են: Մի խոսքով՝ Սերն ու Անոթը վերադարձան ամենքին:

Սակայն տարօրինակ բաներ էլ տեղի ունեցան: Հավերժությունից իրոք գլուխ հանողները, ոգեւորված երեխաների անվրդով խաղերից, շարունակեցին իրենց «քաղաքակրթական արշավանքը»: Երկրի նոտարը շնչասպառ համոզում էր մի քաղաքացու, որ վերջինիս սեփականացրած հողատարածքը օրինականացնելու համար անհրաժեշտ է էսքան գումար՝ առանց մուծման անդորրագրի, երկրի դասախոսն իր գրած կուրսային աշխատանքը փորձում էր սաղացնել ուսանողի վրա առասպելական վճարով, երկրի կթվորուհին թաքնում ջուր էր խառնում կաթին... Այս դեպքերում Սերն ու Անոթը նորից էին վերանուն ամենքից...

Կեսօրին երկնքից երեք դիվերսանտ իջան: Առաջինը խփվեց սահմանապահների արձակած գնդակից: Երկրորդը սարսափած նորից երկինք ելավ: Երրորդը դիվերսանտը բարեհաջող վայրէջք կատարեց եւ սկսեց գոռոռալ.

- Կամ ի՞նձ փրկեք, կամ պարաշյուտս: Հայտնվեց երկրի գնդապետը, մի քանի պտույտ արեց դիվերսանտի շուրջը եւ կայացրեց իր վճիռը.

- Դու հե՛չ, այ պարաշյուտդ ազգին պետք կգա հաստատ:

Ցավալին այն էր, որ հետո պարզվեց իսկությունը՝ դիվերսանտները մերոնք էին եւ ընդամենը նորմատիվներ էին հանձնում:

Երեխաները սրամիջ էլ էին անտեղյակ, քանի որ այդ պահին նրանք հանդիպում էին երկու մանկագրի հետ, որոնք մերկայացան Գրիմ Արած Եղբայրներ անունով: Արանք երեխաներին նախ՝ մերկայացրին մի չսված-չտեսնված հեքիաթ, հետո՝ բառախաղի ցնցող օրինակ: Ահա հեքիաթը. «Լինում է, չի լինում, մի անտառապահի տնակ է լինում: Հետո պարզվում է, որ անտառում երբեք անտառապահ չի եղել: Բա էլ տնակը ո՞վ էր շինել...»:

Անսպասելի ծյուն տեղաց, եւ Գրիմ Արած Եղբայրներն առիթից օգտվելով հորինեցին մարդկությանը հայտնի ամենափայլուն բառախաղը.

Այս ծյունը նույն ծյունն է, որ պոկվել է գույնի ծայրից կամ էլ հույնի բույնը քանդող սյունից:

Հետո չգիտես ինչու մանկագիրներն արտաբերեցին խորհրդավոր խրատը.

- Բառախաղերը ձեզ միշտ պետք են գալու:

...Մեծ ժամանակն ավարտվում էր իր

ծելով, պատմական ժամանակն էլ դադարելու ինքնուրույն ճանապարհ էր ընտրել. անցավ տարբերակը ետ դառնալով սրբագրումներ անելու մեջ էր: Եվ սկիզբ առավ պատմական կառնավալը: Իշխանաց կղզում կարմիր քամին համառորեն չէր բարձրանում, եւ Սամվելն անհամբեր նայում էր ծովի ալիքներին: Երկար սպասելուց հուսահատված շրջվեց եւ ի՞նչ տեսնի՝ դիմացը կանգնած էր հայրը՝ մերկացրած սուրը ձեռքին: Սամվելը հորը վերադարձրեց վաղուց հայտնի բնորոշումը՝ «Համբալ»: Հայրը ժպտաց, նրա ժպտի մեջ պարզ ընթերցման էր «Ամեն անգամ հոք թո՛ բախտը չի բերելու» արտահայտությունը: Ժպտաց, ժպտաց ու սուրն անվրդով մխրճեց նախկին հայրենասերի կուրծքը: Այ այս պահին բարձրացավ կարմիր քամին եւ ցրիվ տվեց պատմավեպի ժամծնված էջերը: Սատենադարանի մոտ հավաքված անբոխի միջից լսելի եղավ՝ «Արժանի՛ էր»:

Մի ուրիշ երկրում կայսրն ու իր մերձավորները համոզում էին «նսացած սոնդոլին» մնալու եւ ռուզիկների կայսրություն չգնալու: Սա էլ ժամեր տեսած քաշքշուկից հետո շնչաց՝ «համոզեցիք»: Ցարն անմիջապես ետ վերցրեց իր հրաժարականը եւ շարունակեց զբաղվել լուսանկարչությամբ:

Նույն երկրում զավեշտական բեղերով մարդը կոնդիցիոներ էր տեղադրում գազախցիկում, իսկ հայտնի փիլիսոփան էլ շարունակում էր խնամել իր միակ խնձորենին... Կարծե՛մ՝ մի անգամ ասել ե՛մ՝ ապագայից խուսափելու կամ նրան հաղթելու ելքը հավերժությունը չէ, այլ Վերադարձը Սկզբին: Ինչքան հեռանում ես ապագայից, այնքան նա հուսահատվում է: Օդանավակայանում վեց հոգի փորձում էին ճշտել Եգիպտոս թռիչքի ժամը, սակայն ապարդյուն, քանի որ եւ իրենք էին նետել ժամացույցները, եւ օդանավակայանի տնօրենությունն էր ազատվել ավելորդ շոայությունից...

Այլևս ժամանակ չկա, բացի դրանից, թանաքը վերջանում է, աչքերիս լույսը քիչ-քիչ մարում, այնպես որ ավարտում եմ այս տարօրինակ տարբերությունը: Չեռագիրը փաթաթում եմ գլանածու, տեղավորում շշի մեջ: Եթե որեւէ մեկը հայտնաբերի քառաձալ թուղթ, ուրեմն դա բնօրինակը չէ»:

Երբ երկրի ձեռագրագետը հեռուստադիտողներին մերկայացրեց շշից հանած 144 տարվա հնություն ունեցող քառաձալ ձեռագիրը, հանկարծ հայտնվեց Յեղիմակը եւ ուղիղ հերարձակումով երկրի բնակիչներին հաղորդեց.

- Վաղը՝ դեկտեմբերի 21-ին ժամանակն ավարտվելու է...

Շատերն անմիջապես նետեցին իրենց ժամացույցները, որ մնացյալ ժամանակը հավերժություն թվա, ոմանք էլ կանգնեցրին ժամացույցի սլաքները...

ՎԱՉԵ ԵՓՐԵՄՅԱՆ



Ինչ է ուզում բառը, որ հերետում է քեզ՝ իբրեւ ճակատագիր.

ու՛ր է քանում ճանապարհը՝ այսքան խարխուլ.

դու այնպես էլ չես գրնելու սկիզբը առավորի, վերջը կեսօրվա

- մարմինդ հանձնիր իրիկնային քամուն՝ նա կիշխեցնի անվույթ խոսքումներդ, որոնք հեռու էին արցունքներից եւ ցավից:

Բացիր դռները գիշերվա.

դու կրեսնես մի ծառ՝ միայնակ ու թախծուր, հիշիր նրան՝ իր ճյուղերի փակ կլուսավորի քո հայացքը,

եւ իրերը ձեռք կրերեն նոր անուններ:

Բացիր դռները գիշերվա

եւ կրեսնես մի աշուն, որ թավալվում է ներկա լինելու ձգքման մեջ.

Այսպեղ ցավից գեղեցկությունը չի ծաղկում...

Մա՛ է վայրը երազանքների...

բայց ո՛ր են աչքերը՝ քեզ հսկող, ո՛ր են ձեռքերը՝ քեզ ուղեկցող,

թփերի մեջ գրոտում է ձայնը, որ քոն էր եւ այժմ հեռու է քեզնից:

Օ՛, կործանված սերեր, բոլորն էլ անուն են ունեցել,

Օ՛, կործանված առավորներ, օ՛, կործանված կեսօրներ,

Ինչո՞ ցավից գեղեցկությունն այլևս չի ծաղկում...

Ուրեմն՝ թաքցրու քեզ խոսքերի մեջ, քարերի փակ, ձայնի երեսում,

հնայում է այն բառը, որը չի երեսում, հանելի է այն վիճակը, որը դեռ չի բացահայտվել...

Միայն վերջին բառը պահիր քեզ, վերջին բառը՝ դաժան ու վրեժխնդիր:



Պատմությունը հարց էր ոչ միայն

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

ՀՀ կառավարության 2011թ. հունիսի 10-ի N973-Ն որոշումը Գորիս քաղաքում զբոսաշրջության զարգացման մասին

«Զբոսաշրջության եւ զբոսաշրջային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

ՀԱԿԵԿԱՍԾ ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 10-ի N 973-Ն որոշման

ԳՈՐԻՍ ՔԱՂԱՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՅՏԵՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԳԵՐՈՎԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅՑՆԵՐ

1. Գորիս քաղաքը հայտարարել զբոսաշրջային կենտրոն:
2. Հաստատել Գորիս քաղաքի զարգացման ծրագրի հայեցակարգային նպատակները եւ գերակա խնդիրները՝ համաձայն հավելվածի:
3. Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում մշակել եւ Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնել Գորիս քաղաքի պատմամշակութային հիմնավորման նախագիծը եւ քաղաքի պատմական տարածքի, ըրա առանձին հատվածների վերակառուցման եւ օգտագործման հայեցակարգը:
3. Հայաստանի Հանրապետության կենտրոնական նախարարին՝ սույն որոշումն 3-րդ կետով նախատեսված հիմնավորումը եւ հայեցակարգը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում ապահովել Գորիս քաղաքում զբոսաշրջության զարգացման ծրագրի մշակումը եւ այն Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացնելը՝ Գորիս քաղաքի զարգացման ծրագրի հայեցակարգային նպատակներին եւ գերակա խնդիրներին համապատասխան՝ հաշվի առնելով Գորիս քաղաքի պատմամշակութային հիմնավորման նախագիծը եւ քաղաքի պատմական տարածքի, ըրա առանձին հատվածների վերակառուցման եւ օգտագործման հայեցակարգը, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշումը:
- 2) Գորիս քաղաքում զբոսաշրջության զարգացման ծրագրի մշակման գործընթացում ապահովել բոլոր շահագրգիռ կողմերի համագործակցությունը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաեւ միջազգային փորձագետների ներգրավումը:
5. Սահմանել, որ՝
 - 1) Գորիս քաղաքում զբոսաշրջության զարգացման ծրագիրը մշակվում է՝ հիմք ընդունելով Գորիս քաղաքի գլխավոր հատակագիծը:
 - 2) անհրաժեշտության դեպքում Գորիս քաղաքի գլխավոր հատակագիծում կարող են կատարվել փոփոխություններ՝ Գորիս քաղաքի պատմամշակութային հիմնավորմանը համապատասխան:
 6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության վարչապետ Տ. Սարգսյան

1. Գորիս քաղաքի զարգացման ծրագրի հայեցակարգային նպատակները բխում են զբոսաշրջության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նպատակներից՝ ամրագրված 2008 թվականի փետրվարի 13-ին Հայաստանի Հանրապետության կառավարության հավանության արժանացած զբոսաշրջության զարգացման հայեցակարգով՝ այն է՝ ավելացնել զբոսաշրջային արդյունաբերության ներդրումն ազգային եկամտի ավելացման, համաչափ տարածքային զարգացման, բնակչության կենսամակարդակի բարձրացման եւ աղքատության նվազեցման գործընթացում՝ պայմանավորված՝
 - 1) զբոսաշրջային այցելությունների թվի աճով:
 - 2) զբոսաշրջությունից ստացված եկամտի ավելացմամբ:
 - 3) աշխատատեղերի ստեղծմամբ:
2. Հայաստանի զբոսաշրջային ռեսուրսների արդյունավետ օգտագործմամբ նոր, մրցունակ զբոսաշրջային ուղղությունների զարգացման, զբոսաշրջային սեզոնի երկարաձգման միջոցով Հայաստանի զբոսաշրջային մրցունակության բարձրացումը, Հայաստանի համայնքներում զբոսաշրջության զարգացումը զբոսաշրջության բնագավառում վարվող պետական քաղաքականության նպատակների իրականացմանն ուղղված հիմնական խնդիրներից են:
3. Իր բնակլիմայական պայմաններով, պատմամշակութային եւ ազգագրական առանձնահատկություններով ու ավանդույթներով եւ արդեն իսկ զարգացող ենթակառուցվածքներով Գորիս քաղաքը լուրջ հեռանկար ունի զբոսաշրջային կենտրոն դառնալու եւ Հայաստանի զբոսաշրջային արդյունաբերության մեջ իր ուրույն տեղը ու դերն ունենալու:
 4. Գորիսն իր աշխարհագրական դիրքով ունի առանձնահատուկ բնություն, ինչը նպաստավոր պայմաններ կստեղծի էկոլոգիական եւ արկածային զբոսաշրջության զարգացման համար:
 5. Հաշվի առնելով Գորիսում գոյություն ունեցող մշակութային հուշարձանների բնույթը, գեղարվեստական արժեքը, առանձին հուշարձանների եւ հուշարձանախմբերի՝ ժամանակակից կյանքի գործնական պահանջների համար օգտագործելու հնարավորությունները, քաղաքում զբաղեցրած դիրքը, ինչպես նաեւ, ելնելով նրանց ապագա օգտագործման, շրջապատող տարածքների գործառական ճիշտ կազմակերպման տեսանկյունից՝ հնարավոր է Գորիսի պատմական կենտրոնում ստեղծել քաղաքի ելույթը համապատասխան մշակութային գոտի՝ «Հին Գորիս» պատ-



մամշակութային արժեքները:

6. Գորիսի արժեքավոր հուշարձաններից հատկապես առանձնանում է հին Գորիսը՝ վաղ շրջանի ամրոցով, ժայռափոր բնակելի եւ հասարակական համալիրներով, «քերձերով», «քրատակներով» եկեղեցին, դպրոցը, տպարանը, «Պասսաժի» խանութները, հյուրանոցը, լիմոնադի գործարանը, բաղնիքը, Միրոնյանների, Յոլյանների ու Բադիրյանների առանձնատները:

7. Գորիսը, համդիսանալով միջազգային հնարավորություններին ակտիվ կենտրոն, Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի, ինչպես նաեւ հարեւան Իրանի համար լավագույն հնարավորություններ ունի վերածվելու նաեւ տարանցիկ զբոսաշրջային գոտու՝ իր յուրօրինակ բնական հանգստի գոտիներով եւ մշակութային միջավայրում հյուրընկալության կազմակերպման առանձնահատկություններով:

8. Զբոսաշրջային կենտրոնի զարգացման նպատակներից է նաեւ տեղի բնակչության հոգեւոր կրթական մակարդակի բարձրացումը, մարզում մշակութային կյանքի ակտիվացումը, արժեւորումը:

II. ԳՈՐԻՍ ՔԱՂԱՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՅՏԵՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

9. Գորիս քաղաքի զարգացման ծրագրի հայեցակարգային նպատակներն են՝ մինչեւ 2016 թվականը՝

- 1) Գորիս քաղաքը միջազգային չափանիշներին համապատասխանող, տարվա չորս եղանակի զբոսաշրջային կենտրոն դարձնելը՝ զարգացնելով այն որպես՝
 - ա. մշակութային զբոսաշրջության կենտրոն,
 - բ. այլընտրանքային եւ արկածային զբոսաշրջության կենտրոն,
 - գ. էկոլոգիական զբոսաշրջության կենտրոն,
 - դ. համահայկական, ինչպես նաեւ միջազգային մանկապատանեկան եւ երիտասարդական ճամբարատեղի:
- 2) նպաստել Գորիս քաղաքի մշակութային կյանքի ակտիվացմանը, աղքատության հաղթահարմանը, մարզի համայնքներում կենսամակարդակի բարձրացմանը՝ արդի պետական քաղաքականության իրականացման համատեքստում:
- 3) զբոսաշրջային կենտրոնի զարգացումը կապահովելու եւ կիրականացվի այնպես, որ տեղի մշակութային ժառանգությունն առաջին հերթին կարժեւորվի եւ պատշաճ կերպով կապահովվի հենց տեղի բնակչության կողմից, զբոսաշրջային կենտրոն, որտեղ հենց համայնքի անդամներն ավանդական եղանակ-

ներով կներկայացնեն նախնիներից իրենց հասած ժառանգությունը՝ միաժամանակ զարգացնելով սպասարկման, հյուրընկալության, առևտրի, հուշանվեղների արդյունաբերության ոլորտները եւ ստեղծելով եկամտների այլընտրանքային աղբյուրներ:

III. ԳՈՐԻՍ ՔԱՂԱՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԳԵՐՈՎԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

10. Գորիս քաղաքի զարգացման ծրագրի գերակա խնդիրներն են՝

- 1) զարգացնել մշակութային մասնակցողական զբոսաշրջությունը Գորիս քաղաքում եւ հարակից համայնքներում: Զբոսաշրջային արդյունաբերության զարգացումը Գորիսում հատկապես կարեւոր խթան կարող է հանդիսանալ Գորիսի կից համայնքներում ամբողջական պահպանվող գյուղ-թանգարաններ հիմնելու համար: Որպես հատուկ ազգային ինքնության ներկայացման եւ գրավիչ զբոսաշրջային օջախներ՝ վերջինները, հյուրընկալելով զբոսաշրջիկներին, իրենցում պահպանված կենցաղով ու ավանդական մշակութային կացութեւերով կարող են հնարավորություն տալ այցելուներին ներգրավվել հաղորդակցության ինտերակտիվ միջավայր, գործնականում չփվել պահպանված մշակութային շերտերի եւ նրանց կրողների հետ:
- 2) ճանաչողական եւ կրթական մշակութային զբոսաշրջության համար իբրեւ կենտրոններ վերցնել Սյունիքի մարզի գյուղերը՝ Տաթևը, Խնձորեսկը, Հայկծորը, Քարահունջը, որտեղ ավելի լավ են պահպանված անցյալից եկող, ոչ նյութական ժառանգության մաս կազմող Գորիսի շրջանին բնորոշ ավանդույթները, կենցաղը, բարբառը, խոհանոցը եւ այլն:
- 3) մշակութային հուշարձանների հանդեպ հատուկ վերաբերմունքի ձևավորումը՝ «Հին Գորիս» արժեւորի ստեղծումը, ինչպես նաեւ ավանդական արհեստագործական շարքի ձևավորումը:
- 11) քաղաքը համահայկական, ինչպես նաեւ միջազգային մանկապատանեկան եւ երիտասարդական ճամբարատեղի դարձնելը:
- 12) մարդկային ռեսուրսների զարգացումը՝ ապահովելով կարգի շարունակական պատրաստումը եւ վերապատրաստումը:
- 13) քաղաքի՝ որպես տարվա չորս եղանակների, գրավիչ ու բարենպաստ զբոսաշրջային կենտրոնի նկարագրի ձևավորումը եւ այն միջազգային շուկայում պատշաճ ներկայացնելը:
- 14) նախադրյալների ստեղծումը՝ քաղաքի բնության ռեկրեացիոն ռեսուրսների պահպանության եւ կայուն օգտագործման համար:
- 15) քաղաքում երաժշտական, գորգագործական եւ այլ մշակութային մրցույթային փառատների անցկացումը եւ դրանով իսկ քաղաքի վարկանիշի բարձրացումը, մասնավոր ներդրումների ավելացման քաղաքականության խթանումը:

Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար Դ. Սարգսյան

ամբողջ հանրապետության համար:

- 5) ժայռափոր Գորիսի տարածքում յուրօրինակ զբոսաշրջային հանգրվանի ստեղծումը:
- 6) Գորիսը եւ ֆրանսիական Կիեն քաղաքները հայտարարվել են քույր-քաղաքներ: Համագործակցության այս հարթությունը հնարավորություն է ընձեռում իրականացնելու զբոսաշրջություն խթանող համատեղ ծրագրեր երկու քաղաքների միջեւ՝ երիտասարդական կրթական ու կամավորական ծրագրերով փոխանակում, համատեղ ֆորումներ, սեմինար-քննարկումների անցկացում եւ այլն, ինչը եւս կնպաստի Գորիսում մեծ թվով օտարերկրյա զբոսաշրջիկների ընդունման, սեփական մշակույթի ծանոթացման ու հանրահռչակման համար:
- 7) քաղաքի ենթակառուցվածքների զարգացումը՝ քաղաքի ազգային նկարագրից, առանձնահատկություններին ու ավանդույթներին, պատմամշակութային ժառանգությանը հարիր, միջազգային չափանիշներին համապատասխանող, լիարժեք ավարտված, խնամված եւ գրավիչ ճարտարապետական միջավայրին համապատասխան:
- 8) քաղաքի տրանսպորտային համակարգի, այլընտրանքային ճանապարհների բարելավումը:
- 9) Գորիսի օդանավակայանի վերագործարկումը:
- 10) քաղաքում առանձին ծառայություններով մասնագիտացված թաղամասերի, փողոցների, ինչպես նաեւ ավանդական արհեստագործական շարքի ձևավորումը:
- 11) քաղաքը համահայկական, ինչպես նաեւ միջազգային մանկապատանեկան եւ երիտասարդական ճամբարատեղի դարձնելը:
- 12) մարդկային ռեսուրսների զարգացումը՝ ապահովելով կարգի շարունակական պատրաստումը եւ վերապատրաստումը:
- 13) քաղաքի՝ որպես տարվա չորս եղանակների, գրավիչ ու բարենպաստ զբոսաշրջային կենտրոնի նկարագրի ձևավորումը եւ այն միջազգային շուկայում պատշաճ ներկայացնելը:
- 14) նախադրյալների ստեղծումը՝ քաղաքի բնության ռեկրեացիոն ռեսուրսների պահպանության եւ կայուն օգտագործման համար:
- 15) քաղաքում երաժշտական, գորգագործական եւ այլ մշակութային մրցույթային փառատների անցկացումը եւ դրանով իսկ քաղաքի վարկանիշի բարձրացումը, մասնավոր ներդրումների ավելացման քաղաքականության խթանումը:

Դատավորը ենթարկվել է կարգապահական պրոյեկտի

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Ըստ ՀՀ դատական օրենսգրքի՝ դատավորի կարգապահական պատասխանատվության հարցը քննելու արդյունքում ՀՀ արդարադատության խորհուրդը կարող է դատավորի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը՝ նախազգուշացում, նկատողություն, որը զուգորդվում է դատավորին 6 ամիս ժամկետով աշխատավարձի 25 տոկոսից զրկելով, խիստ նկատողություն, որը զուգորդվում է դատավորին 1 տարի ժամկետով աշխատավարձի 25 տոկոսից զրկելով, դատավորի լիազորությունների դադարեցման միջնորդությամբ ՀՀ նախագահին դիմելը: Ըստ iravaban.net կայքի՝ 2012 թվականին ՀՀ արդարադատության խորհուրդը կարգապահական պատասխանատվության է ենթարկել 22 դատավորի, այդ թվում՝ Սերգեյ Աղաբեկյանին, ով 2001 թվականից առ այսօր աշխատում է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության

դատարանի դատավոր: Նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ թիվ 1 կայազորի զինվորական դատախազ Հ. Պողոսյանը 24.06.2011թ. մինչև 15.07.2011թ. ներառյալ գտնվել է ամենամյա հերթական արձակուրդի մեջ և 27.06.2011թ. կայացած դատական նիստին ներկա չի գտնվել: Չնայած դրան՝ դատարանը նշված օրը կայացված որոշման մեջ հիշատակել է դատախազ Հ. Պողոսյանին անունը, որպես գործին մասնակցող դատախազ: Փաստորեն, դատավոր Ս. Աղաբեկյանը, դատական նիստին դատախազ Հ. Պողոսյանին մասնակցից չդարձնելու պայմաններում դատարանի 27.06.2011թ. կայացված որոշման մեջ նրա անունը հիշատակելով, թույլ է տվել դատավարական օրենքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտում: Այսպիսով, հիմք ընդունելով վերոգրյալը՝ ՀՀ արդարադատության խորհուրդը գտնում է, որ ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Ս. Աղաբեկյանը արդա-

րադատություն իրականացնելիս թույլ է տվել նյութական և դատավարական օրենքների նորմերի ակնհայտ և կոպիտ խախտումներ: ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ս. Աղաբեկյանին հայտարարվել է խիստ նկատողություն՝ զուգորդված 1 տարի ժամկետով աշխատավարձի 25 տոկոսից զրկելով: **Հ.Գ.** ՀՀ արդարադատության խորհուրդի կարգապահական հանձնաժողովի հունվարի 31-ի նիստում արդարադատության խորհուրդը, քննության առնելով Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Սերգեյ Աղաբեկյանի դիմումը և ղեկավարվելով ՀՀ սահմանադրության 95-րդ հոդվածի 5-րդ կետով, ՀՀ դատական օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 3-րդ մասով և ՀՀ կառավարության 2007թ. հոկտեմբերի 11-ի թիվ 1184 որոշմամբ, որոշել է դիմել ՀՀ նախագահին՝ վերջինիս լիազորությունը դադարեցնելու միջնորդությամբ: ■

Պաշտոնանկ է արվել մարզի քննչական բաժնի պետը

ՔԱՋԱՐԱՆԻ ԳՈՐԾ

Ս.թ. հունվարի 25-ին պաշտոնանկ է արվել ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Սյունիքի մարզի քննչական բաժնի պետ, գնդապետ **Տիգրան Գասաբյանը**: Կադրային այդ փոփոխության մասին պաշտոնական հաղորդագրության բացակայության պատճառով շարունակվում է շրջանառվել վարկածը, որ մարզի գլխավոր քննիչը թախտընկեց է արվել Քաջարանի հայտնի գործի շրջանակում: Ըստ լավատեղյակ աղբյուրների՝ նա հայտնի սպանության նախաքննությունը կեղծելու գործում հեղուկ կատարել է մարզի նախկին դատախազ Արայի Թարվերյանի ապօրինի ցուցումները (վերջինս, ի դեպ, դեռևս ազատության մեջ է): Նույն օրը՝ հունվարի 25-ին, պաշտոնանկ է արվել նաև մարզի քննչական բաժնի պետի տեղակալ, փոխգնդապետ Աշոտ Արդյանը, ով ամենայն հավանականությամբ կանցնի կենսաթոշակի: ՀՀ ոստիկանության քննչական



գլխավոր վարչության Սյունիքի մարզի քննչական բաժնի պետ է նշանակվել Վահրամ Դադուկյանը, ով մինչ այդ աշխատում էր նույն քննչական բաժնի Գորիսի բաժանմունքի պետ: **Հ.Գ.** Գրիգոր Պապյանի սպանության գործով Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում ընթացող վերաքննությանը նվիրված հերթական դատական նիստը տեղի կունենա 2013թ. մայիսի 6-ին: Այդպիսի որոշում է ընդունվել ս.թ. վերջինից 6-ին կայացած դատական նիստում՝ մեղադրողի միջնորդությամբ: ■



Արթուր Հարությունյան, Սյունիքի ՄՓԾ պետ



Հայկարամ Մխիթարյան, ՀՀ ԱԻ նախարարի տեղակալ

աճել է նաև այն պատճառով, որ նախկինում շատ դեպքերի չէին արձագանքում, բայց անցած 2012թ. արձագանքել ենք բոլոր այն հեռախոսագրանցներին, որոնք գրանցվել են: Այժմ նաև արձագանքում ենք այն դեպքերում, երբ ծնաբնի պատճառով մեքենաները մնում են ծայր տակ: Վերջին շրջանում դրանք հաճախակի են դարձել»: Ա.Հարությունյանը համագործակցության կոչ արեց միջպետական ճանապարհը ընկերություններին: Ինչպես նա է նշում, երեկոյան ժամը 6-ից հետո ճանշին ընկերությունների որևէ աշխատակցի հետ խոսել հնարավոր չի լինում: Ըստ նրա՝ հարկավոր է այս դեպքում սերտ համագործակցություն իրականացնել կապի և տրանսպորտի նախարարության հետ, միգրացիոն թեժ գծի առկայությունն օգնի ծնաբնի և պատահարների դեպքում արագ արձագանքել և համատեղ վերացնել դրանք: «Գիտեմ, որ հարեան պետություններում գոյություն ունի այնպիսի օրենք, ըստ որի վատ եղանակային պայմանների ժամանակ լեռնանցքներում արգելվում է այն մեքենաների երթևեկությունը, որոնք չունեն համապատասխան անվադողեր, հզորություն և այլն», - ասաց Ա.Հարությունյանը: Փրկարար ծառայության աշխատակիցները նաև կարիք ունեն ձմեռային հատուկ արտահագուստի, որով հնարավոր կլինի աշխատել ձմաբքի ժամանակ: Վերջում ելույթ ունեցավ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի տեղակալ Հայկարամ Մխիթարյանը, ով մասնավորապես ասաց. «Շնորհակալ եմ համապարփակ և քվադրակալից հաշվետվության համար: Արտակարգ իրավիճակների նախարարությունը նորաստեղծ է, այն գործում է ընդամենը երեք տարի: Բավականին գործեր արվել են և դեռ շատ անելիքներ կան: Այսուհետ պետք է հաշվետվություն տալիս խոսել նաև առկա թերությունների մասին»: Նա կոչ արեց ԱԻՆ մարզային կառույցների աշխատակիցներին՝ համագործակցել նաև մարզպետարանի, քաղաքապետարանների հետ, առաջացած խնդիրների դեպքում դիմել նաև նրանց:

2012-ին Սյունիքում գրանցված արտակարգ դեպքերի թիվը 2011-ի համեմատ աճել է 48.6%-ով

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

Հունվարի 30-ին Սյունիքի մարզային փրկարարական ծառայությունը ներկայացրեց 2012թ. կատարած աշխատանքների հաշվետվություն, որի քննարկմանը ներկա էր նաև ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի տեղակալ Հայկարամ Մխիթարյանը: Ձեկուցումով հանդես եկավ Սյունիքի ՄՓԾ պետ Արթուր Հարությունյանը, ելույթներով՝ պետական հակահրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչության պետ Միշա Խաչատրյանը, Սեյմիկ պաշտպանության հարավային ծառայության պետ Ստեփան Բաղդասարյանը, Հիդրոմետ ծառայության պետ Ժորա Գեորգյանը, տեխնիկական անվ-

տանգության կենտրոնի պետ Ռուբիկ Մարտիրոսյանը: Սյունիքի ՄՓԾ պետ Արթուր Հարությունյանը նշեց. «2012թ. Սյունիքի ՄՓԾ հիմնական գործառնությունները մարզի տարածքում եղել են փրկարարական, անհետաձգելի վթարավերականցողական և հրդեհաշիջման աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մեթոդների ու ձևերի ուսուցումը, մարզի տարածքում արտակարգ իրավիճակներ առաջացնող երևույթների ուսումնասիրությունը, արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների վերացման միջոցառումների կազմակերպումն ու իրացումը և այլն»: Անդրադառնալով 2012թ. տեղի ունեցած պատահար-

ներին՝ Ա.Հարությունյանն ասաց, որ նախորդ՝ 2011թ. համեմատ 2012թ. գրանցվել է դեպքերի աճ. «2012թ. Սյունիքի ՄՓԾ-ում գրանցվել է 269 դեպք (2011թ.՝ 181), որոնց հետևանքով զոհվել է 17 (2011թ. նույնպես 17), մարմնական վնասվածքներ ստացել՝ 59 մարդ (2011թ.՝ 39): Այսպիսով, 2012թ. համեմատությամբ գրանցված արտակարգ դեպքերն աճել են 88-ով կամ 48.6%-ով, զոհերի թիվն նույնն է՝ 17, իսկ վիրավորների թիվն աճել է 20-ով կամ 51.3%-ով: Գրանցված դեպքերից 186-ը տեխնիկական են, որը կազմում է ընդհանուր դեպքերի 69.1%-ը (2011թ.՝ 133), որոնց հետևանքով զոհվել է 17 մարդ, ընդհանուր զոհերի 100%-ը (2011թ. 17 կամ 85.5%), վիրավորվել՝ 9 մարդ, ընդհանուր տուժածների 39%-ը (2011թ.

39 կամ 55%): Տեխնիկական բնույթի արտակարգ դեպքերն աճել են 53-ով կամ 39.8%-ով, իսկ վիրավորների՝ 20-ով կամ 51.3%-ով: Գրանցված տեխնիկական արտակարգ դեպքերից 137-ը (73.6%) հրդեհի դեպքերն են (2011թ.՝ 112): Հրդեհների թիվը մարզում աճել է 25-ով (22.3%): Հրդեհների հետևանքով մահացել է մեկ քաղաքացի, ով ծխահարվել է բռնկված հրդեհի պատճառով (2011թ. մահացել է 2, վիրավորվել՝ 12): Մարզի տարածքում գրանցվել է 33 ՏՏՊ, որի հետևանքով մահացել է 13, վիրավորվել՝ 56 մարդ (2011թ.՝ 12 դեպք, մահացել է 11, վիրավորվել՝ 20 մարդ): Սյունիքի ՄՓԾ-ն անցած տարի իրականացրել է որոնողափրկարարական աշխատանքներ «Արեւիկ» ազգային պարկի տարածքում, որտեղ ձմաբքի պատճառով մոլորված բնակիչներին հաջողվել է գտնել և վերադարձնել Կապան: Հաջողվել է նաև «Տաթեեր» ճոպանուղու խափանման պատճառով վազոններում մնացած 41 ուղեորի անվտանգ իջեցումը: Ողջի գետից դուրս է բերվել մեկ դիակ, հաջողվել է կանխել մեկ ինքնասպանության փորձ: Սյունիքի մարզում պատահարների թվի աճը մարզային փրկարարական ծառայության պետը բացատրում է հետևյալ կերպ. «Դեպքերի թիվը միգրացի

ԱԺ ԶՅԴ խմբակցության պարզամարտի Աղվան Վարդանյանի հայրարարությունը



Հարգելի խորհրդարանի Զանգվածային լրատվամիջոցները հրապարակել են երկու փաստաթուղթ: Մեկ հուշագիր է մեկ համաձայնագիր՝ ստորագրված Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի և մեր բարեկամ Իրանի Իսլամական Հանրապետության Ատրպատական մահազի մերկայացուցիչների կողմից:


Լստ դրանց՝ նախատեսվում է Սյունիքի մարզից 52.000 հեկտար վարձակալության տակ իրանական կողմին՝ անասուններ տեղափոխելու և արածեցնելու նպատակով: Ժամկետը 5-ից 10 տարի է: Մեկ հեկտարի վարձավճարը սկզբում անհայտ է, հետագայում աճելով՝ մինչև 25 դոլար: Գոնե հայերեն տարբերակում՝ կիսագրագետ, դասական ուղղագրությամբ, բազմաթիվ հարցականանորոշություններով փաստաթղթեր են:

Սյունիքին աղետ է սպառնում

ԵՎՍ ՄԵԿ ՄԱՐՏԱՅՐԱՎԵՐ Սկզբը՝ էջ 1

Իբր հող ունենք, հողատեսքեր ունենք, հիմա էլ գլխաքանակ ենք ավելացնում, վարձով տալիս: Մեր ավազափ երկրի առավելագույն ձգվածությունը 360, ամենալայն հատվածը հազիվ 200 կմ է: Հայաստանում Միեր Մելքոնյան անուն-ազգանունով գիտնական է եղել, ով ժամանակին իր մասնագիտությունը կարելու միտումով ջատագովում էր ոչխարաբուծության զարգացումը, սակայն անգամ նա է դեռել 1974-ին՝ 50 տարի առաջ իր «Ոչխարաբուծության զարգացման էտապները»-ն ինտենսիվացման ուղիները» գրքում խոստովանել: «Անասուններով արոտավայրերի չափից դուրս բեռնվածության կորուստները ազդեցությունը հանգեցնում է ոտնահարած աստիճանավոր ճանապարհների առաջացմանը և հողի վերնաշերտի մերկացմանը, որը համախառն կազմում է արոտավայրերի ընդհանուր տարածությունից 30 (Արագած) և նույնիսկ 60 (Ջանգեզուր, Ղափան, Մեղրի) տոկոսը»: Գիտնականը քննարկում էր հասած կլիմայի, եթե անկախությունից հետո հողը չսեփականացնողները, հանրային ունեցվածքը, այդ թվում անասունը, անհատույց չորվեր գյուղացուն, ու պարզապես հայ շինականը չզգնար անեկամտաբեր մանր եղջերավորի հիմնավոր կրճատման: Թե՛ կարծում եք երկու տասնամյակը բավարար ժամանակ է բնության ինքնավերականգնման, նրան հասցված վնասն ուղղելու համար: Կհավատա՞ք, եթե ասեն, որ հարյուրամյակներ են պետք 1 սմ հողաշերտի գոյացման համար, ընդամենը՝ բնականոն զարգացման դեպքում: Թերեւս, ինձ չէք վստահում, ուստի դիմե՛ք Բոբերտ Ալենի «Ինչպե՛ս փրկել երկիրը» գրքի օգնությամբ: «Նույնիսկ բնական բուսածածկույթի դեպքում 10 մմ հաստությամբ հողաշերտ գոյացնելու համար անհրաժեշտ է 100-400 եւ ավելի տարի, իսկ միջին չափի գրքի էջի երկարության հողաշերտի համար՝ 2000-8500 տարի»: Ու այսքանից հետո դուք մեր երոզացված լեռնաշխարհը կամոլիկն նորեմ դնում եք սոսկալի հարվածի տա՞ն ու դիմացն ի՞նչ եք ստանալու. մեկ հեկտարի դիմաց 26 ԱՄՆ դոլլար, որը 50 հազարի պարագայում կանի 1 միլիոն 300 հազար դոլլար: Ընդամենը սա չէ՞: Իսկ վնասը, որը վերականգնել այլևս հնարավոր չի լինի՞: Մտաբերեցի «Գարուն» ամսագրի 1979-ի հունվարյան համարում «Ինչու՞ են բերրի հողերը դառնում անապատ» հոդվածի հեղինակի խոսքովից հարցը՝ որտեղի՞ց Երմ գտնենք մեր արերը ճանապարհուր համար: Մի արեք, քա-

նի դեռ ուշ չէ, հրաժարվեք կործանարար քայլից, վստահեք ճանաչված գիտնական Ալենին. «Պերարածեցումը, անկախ այն բանից, որտեղ է տեղի ունենում՝ հարուստ, թե աղքատ հողերում, կարող է ճակատագրական դառնալ»: Վստահեք FAO-ի 2006-ի զեկույցին, համաձայն որի երկրագնդի արոտավայրերի 20 տոկոսից ավելին գերարածեցման հետևանքով անվերականգնելի չափերով երոզացվել է:



ԱՐԱՄ ԶՅՈՒՆԻԱՅԵՐ

նավորված է դարեր ի վեր Սուդանում (25 միլիոն), Եթովպիայում (45 միլիոն) առկա ոչխար-այծով: Ուշադրություն դարձրե՛լ եք՝ երկրագնդի վրա որտեղ է անապատը գերակշռում. այնտեղ, ուր խաշնարածությունը մշտապես առաջնային ճյուղ է եղել՝ Իրաք, Իրան, Աֆղանստան, Պակիստան, Իսրայել, Սոմալիա, Եգիպտոս, Եթովպիա, Ղազախստան... Եվրոպայում անասնապահության առումով համեմատաբար թույլն Իսպանիան ու Հունաստանն են եւ, պիտի կարծել, պատահական չէ, որ վերջին ճգնաժամը խորությամբ առաջինն այս երկուսում զգացվեց: Հիշյալ երկրների մասին կինոնկարներում, հեռուստառեպորտաժներում չե՞ք նկատել՝ բուսածածկը որչափ աղքատիկ է, լեռնալանջերը՝ քարքարոտ, լերկ: Պատճառը, այո, ոչխարն ու այծն են: Անասնապահության ճյուղը, որին նրանք ավանդաբար մեծ տեղ են տվել, տալիս: (Իսպանիա՝ 26, Հունաստան՝ 13 միլիոն): Ահա թե ինչու 12,5 անգամ մեծ (504,6 հազար քառակուսի կիլոմետր) տարածք է 2,2 անգամ շատ խոշոր ունեցող Իսպանիան հազիվ Շվեյցարիայի չափ կաթնամթերքի արտադրության մեծ անգամ պակաս յուղ, պանիր են ստիպված է կաթ ներկրել: Հայաստանի մասն լեռնային Շվեյցարիան (41,3 հազար քառակուսի կիլոմետր) կկարողանա՞ր հռչակվել իր առողջարաններով, հանգստյան տներով, պանրով, կզարվե՞ր զբոսաշրջությամբ, եթե 200 հազարի փոխարեն պահեր, ասենք, 10 միլիոն ոչխար, որոնք վաղ գարնանից մինչև խոր աշուն հիմքից կրծեին խոտը, եթե բուսածածկից զրկված լինեին լեռները եւ ծյան, անձրեւի ջրերը ներծծվելու, առու, աղբյուր դառնալու փոխարեն հողի արզավանդ շերտը շրտած-տարած լինեին ցածրավայրերը, ծովերն ու օվկիանոսները: Նկատե՛ք՝ հետամնաց երկրներում մեկ կովի կաթնատվությունը 6, մսինը՝ 2 անգամ պակաս է եվրոմիություն երկրներից: Աշխարհում 2 միլիարդի հասնող ոչխար-այծն ապահովում են համաշխարհային մսի ընդամենը

տարածքային մարմինների մասն՝ չակերտավոր ինքնագործունեությունը: Եթե կայանա, այդ գործարքից ի՞նչ է շահելու մեր պետությունը, շահելու՞, թե՛ կորցնելու են այդ տարածքների հարակից գյուղացիական տնտեսությունները, ի՞նչ է լինելու քաղաքական, հոգեբանական, բնապահպանական հետեւանքը: Ես չեմ անդրադառնում վարձակալության համար սահմանված անորոշ գումարին. ինչ գումար էլ սահմանված լինի, նախ պետք է հաշվի առնել խնդրի ռազմավարական նշանակությունը եւ մեր երկրին սպառնացող ռիսկերը: Ի վերջո, հարց է առաջանում, եթե այս վարձակալությունը ձեռնտու է իրանական կողմին, եւ մենք ունենք մասնաշտաբի ազատ արտավայրեր, ինչո՞ւ ինքներս չենք սուբսիդավորում կամ ցածր տոկոսադրությամբ վարկեր տրամադրում մեր գյուղացիներին, ինչո՞ւ պետու-

թյունը չի ապահովում մասնաբերքի եւ կաթնամթերքի երաշխավորված իրացում, ինչո՞ւ մեր գյուղացին կամ տնտեսավարողներն իրենց ուժերով չեն կարող զարգացնել անասնապահությունը: Ինչո՞ւ չենք ուզում երկիրը լքել ցանկացող գյուղացու փոխարեն սոցիալապես ավելի ապահով բնակչություն եւ զարգացած անասնապահություն ունենալ: Այդուհանդերձ, կա հարցերի հարցը՝ միջազգային հարաբերություններն ինչպե՞ս կարող են մասն կիսագրագետ ու սիրողական մոտեցումներով դրսևորվել: Կիսաթաքուն այս գործելաոճը որքանո՞վ է համապատասխանում իրավական, ժողովրդավարական պետության մեր կարգավիճակին: Սրանք հարցերն են: Գնահատականը կառավարության պարզաբանումներից հետո: 05.02.2013թ.

4,2, իսկ կաթի՝ հազիվ 1,6 տոկոսը: ճիշտ է, կան զարգացած պետություններ, ուր ոչխարաբուծությունը եւս առաջնային ճյուղ է, սակայն արդյունք ապահովում են նրանք, որոնք, որպես պարտադիր կարգ, արդեն մեկ դարից ավելի ընտրել են հերթափոխային եւ արգելափակողային արածեցումը. արոտավայրը բաժանվում է հատվածների եւ, մինչև խոտի բարձրությունը 16-18 սմ չհասնի, անասունի փոխարդում նոր տարածք չի թույլատրվում, իսկ մեզ մոտ բազմաքանակ հոտերն ամիսներով նույն երթուղին ունեն՝ գյուղ-հանդ: Փոխանակ ընդօրինակելու եվրոպական փորձը՝ գուրգուրանքով վերաբերվելու մայր բնությանը, մենք թույլ ենք տալիս նախկին սխալը՝ վերստին ուղեմիջ ընտրելով ոչխարաբուծությունը: Դա քիչ է՝ իրենց 52 միլիոն ոչխարի ձեռքը կրակն ընկած իրանցի ֆերմերներին հրավիրում ենք մեր տուն: Իհարկե, նրանք օր առաջ մեծ սիրով կստորագրեն համաձայնագիրը: Ի դեպ մինչև 1950-ական թվականները Արշալուի, Ղազախի, էլի ինչ իմաստով Բորչալուի մեկ միլիոնի հասնող հոտերը միջպետական պայմանագրերով արոտային շրջանում արածեցնում էին Լոռվա, Սեւանի ավազանի, Ջերմուկի ու Սիսիանի ալպյան գոտիներում: Ընդունենք, այն ժամանակ ամեն ինչ կառավարվում էր Մոսկվայից, հանրապետությունները «եղբայրներ» էին, թեեւ հիմնավոր անառնիքային դեպքում դժվար թե մեզ հարկադրեին ոչխարի քանակությունը 687,7 հազարից (1933թ.) 1977-ին հասցնել 2 միլիոն 350 հազարի: Պատկերացնո՞ւ եք՝ 2 միլիոն 350 հազար՝ հավելած գառները, չիաշվառված... Պատուհաս, բազմազուկս հիդրա, որի որկորը լցնելու համար մերոնք վազոճներով Ուկրաինայից, Ռուսաստանից ծղոտ էին ներկրում: Թե համուն ինչի, անհասկանալի է: Ոլորտից հեռու կանգնած ընթերցողին, թերեւս, բացատրե՛մ, թե խոշոր մանրից ինչով է նախընտրելի մեկ կովը տնտեսապես շատ ավելի շահավետ է, քան 10 ոչխարը, իսկ բնապահպանական առումով համեմատության եզրեր չունեն. կովը լեզվով է բռնում խոտը, ուստի հիմքից պոկել չի կարող: Ոչխարն օրական ունակ է 15-20 կիլոմետր քայլել, ունի բարակ, շարժուն շրթունքներ, սուր ու կոր ատամներ եւ ի վիճակի է ուղղակի սափել բուսածածկը: Բացի դա՝ 600 տեսակ նուխախոտից կովն ուտում է ընդամենը 56-ը, ոչխարը՝ 570-ը, ըստ էության՝ ամեն բան: Հավելեք սեպանման կծղակները, որոնցով կեր չեղած ժամանակ մի կողմ է մտնում ծյունը՝ արմատախիլ անելով նորածիլ կանաչը, քանդելով հողը: Այժմ էլ, հո, գիտե՛ք՝ կարող է երկու ոտքին կանգնելով խժռել անգամ քիներն ու ծառերը: Հիշյալ խնդիրը ժամանակին քանից բարձրացրել է «Գարուն» ամսագիրը, 2010-ին՝ «Հայկական ժամանակը», «Գրական թերթը»,

գրողների միությունում նույն թվի մայիսի 11-ին կազմակերպված «Ոչխարաբուծության աղետալի հետեւանքները» թեմայով քննարկման մասնակիցները դիմել են ՀՀ նախագահին եւ վարչապետին, ստացվել է մտահոգությունը, իբր, կիսող պատասխան ՀՀ գյուղնախարարությունից, բայց, ինչպես տեսնում եք, ինչ-որ ուժեր, ինչ-ինչ նպատակադրումով, ժողովրդի լեզվով ասած՝ իրենց էլն են քշում: Կրկնենք՝ Հայաստանում ոչխարի թույլատրելի քանակը 300-350 հազարն է, փոխարենը պետք է զարգացնել բարձր մթերատու տավարաբուծությունը եւ մեղվաբուծությունը: Ահա ուղին, որով պիտի աներեր ընթացան անասնապահությունը: Այդ դեպքում հաստատապես կդառնանք պարենի առումով ինքնաբավ երկիր, հյուսված հողը կփրկվի, թեպետ քարոտները, լերկացող լեռնալանջերը տասնամյակներ անց վերստին կշտկեն ուսերը, աչքներս դարձյալ կշոյի կանաչը, էլի կկարկաչեն առուները, ցամաքած աղբյուրներից կրկին ջուր կբխի, նորեն կշատանա վայրի կենդանին, կզարգանա մեղվաբուծությունը, միով բանիվ՝ թե գաթան կմնա լրիվ ու թե մանրիկ կուշտ կլինեն: Գործադիր իշխանության խնդիրն էլ կդառնա միջպետական պայմանագրերով գյուղացու, ֆերմերի համար արտահանման պայմաններ ապահովելը, մեր բարձրորակ ալպյան գոտիներում արածող կովերից, երինջներից ստացված մսի, յուղի, պանրի, ինչպես եւ մեղրի համար շուկա գտնելու, զբոսաշրջությանը զարկ տալն ու այցելուների հոսք ապահովելը, բնապահպանական արդեն այլ հարցերի լուծում որոնելը, ոչ թե, թող ներվի ասել, չարիքին ընդառաջելը՝ մարդկանց թյուրիմացության մեջ օգտելով, թե իբր դրանով սոցիալական խնդիր են լուծում: Հակառակ, Հայաստանում երբեք այսքան կաթ չի արտադրվել (2012-ին՝ 601,5 հազար կգ), մեկ կովի միջին կաթնատվությունը երբեք այսքան բարձր չի եղել (2035 կգ): Ու դա՝ շնորհիվ կերի բնական պաշարների ինքնաբերաբար ավելացման, ինչը հետեւանք է մանրի կտրուկ անվնաս: Հողվածն ավարտեմ անգլիացի մտածողի հայտնի ասույթով՝ ոչխարները կերան մարդկանց: Բնապահպանների, հայոց աշխարհի ապագայով մտահոգ անճանց եւ ուղղում խոսքս՝ թույլ չտանք, որպեսզի ասիական մտածելակերպի տեր անգիտակ մարդիկ, մթին նպատակ հետապնդող շահառուները բացեն երկրի հարավային դարպասը կծղակավորների առջեւ, ըստ էության ամենը, սովոր հոտեր կազմելու դեպքում՝ պատուհաս հանդիսացող կենդանին խժռի մեզ, մեր բնությունը, Եժդեհի ձեւակերպմամբ՝ հայրենի անկյունը: ■

ԸՆՏՐՈՂԻ ԱՄԲԻՈՆ

Քվեարկենք այն թեկնածուի օգտին, ով ի վիճակի է կարարելու համակարգային փոփոխություններ

ՄԱԼԿ ԹԵԼՈՒՆՑ

Իրավագետ, պարմական գիտությունների թեկնածու, գ. Խնձորեսկ



Բազմակարգ բարդ իրողությունների, գործընթացների հոլովույթում ենք գտնվում ազգովի. դպրոցական դասագրքերից էլ հայտնի է այն անառարկելի ճշմարտությունը, որ անցումը ստրկատիրությունից ավատատիրության, վերջինից՝ կապիտալիզմի կամ, ինչպես հիմա են ասում, շուկայական տնտեսության՝ բուրժուադեմոկրատական կարգերի, բոլորիս հայտնի մի շարք չափանիշներով բնութագրվում է շարունակական առաջադիմությամբ: Բայց մեր անցումը սոցիալիզմից կապիտալիզմի՝ հետընթաց քայլ է՝ ներսոցիալական վտանգավոր, երբեմն նույնիսկ անկանխատեսելի ծանր հետեւանքներով, ինչը չի կարելի անտեսել: Եթե դրան էլ գումարենք օլիգարխիական կառավարման բնորոշ գծերն ու մյուս հին ու նոր բացասական երեւույթներն ու գործընթացները, ապա վիճակի ողբերգականությունն ակնհայտ կլինի: Անգամ բուրժուական գաղափարախոսները՝ Թոմսոնը, Շպեյնգելը և մյուսները, ժամանակին զգուշացնում էին անհաշտելի կոնֆլիկտներով բնութագրվող կապիտալիստական, մասնավորապես եվրոպական կարգերի պատճենման անհեռանկարայնության մասին, իսկ ԽՍՀՄ փլուզումից հետո տեղի ունեցող հետսոցիալիստական գործընթացներն անգամ ժամանակակից բուրժուական կարգերի ջատագովներից շատերը բնութագրում են սոսկ որպես նեոֆեոդալիզմ: Այդ կարգերը, մինչդեռ, մենք պատճենել են շարունակելու ենք պատճենել այն ժամանակ, երբ դրանք գտնվում են ոչ թե սկզբնավորման, ծաղկման, այլ լճացման՝ մայրամուտի փուլում, այն ժամանակ, երբ դրանք կանգնած են անխուսափելի հերթափոխության առջեւ: Անշուշտ, սոցիալիզմի եւ կոմունիզմի պատճենման մասին խոսք լինել չի կարող, թեպետ այսպես շարունակվելու դեպքում չեն բացառվում անկանխատեսելի զարգացումները: Մեր խոսքն այստեղ պատմությունից դասեր քաղելու, բանական կարգեր ստեղծելու մասին է, մինչդեռ այսօրվա գործընթացները մեզ միայն մի դառը մտայնության են համզեցնում՝ մենք պարզապես «ջրից դուրս ենք եկել ու ջրհեղեղ ընկել...»: Այդ ջրհեղեղը ծանր հետեւանքներ ունեցավ էլ, ցավոք, դեռ կունենա հատկապես մեր փոքրիկ, աշխարհաքաղաքական անբարենպաստ վիճակում գտնվող երկրի համար, երկիր, որի երեք միլիոն բնակչությունից մեկ միլիոնն արդեն հեռացել է սեփական անկախ երկրից եւ շարունակվում է հեռանալ, երկիր, որը բնութագրվում է բնակչության բնակական աճի վտանգավոր անկմամբ, որտեղ տեղի ունեցած անհորձալ գույքային-սոցիալական բեռնազանցումն արդյունքում զանգվածային գործազրկության, աղքատության պայմաններում՝ առասպելական կարճ ժամկետում, ծլել են միլիոններ, միլիարդներ կուտակված «բիրդան աղաների» խմբեր: Իսկ դրանց կողքին մարդկանց մեծ մասը նույնիսկ իր սովորական կենցաղային պահանջները չի կարողանում բավարարել, շատերն էլ մեռնում են

իրավունքից՝ հակառակ մեր սահմանադրության դրույթների: Սա եւս պակաս վտանգավոր վիճակ չէ: Այստեղ ավելորդ չեն համարում բերել մեր հայտնի մտավորական, բուրժուական կարգերի (բուրժուական եւ ոչ թե սոցիալիստական) ջատագով Գրիգոր Արծրունու մտահոգիչ եւ ուսանելի խոսքը: Արծրունին ջատագովության հետ մեկտեղ մտահոգված նոր՝ կապիտալիստական կարգերի բերած, իր իսկ խոսքերով՝ հրեշավոր սոցիալ-տնտեսական բեռնազանքներից, հասարակության մի փոքր մասի՝ հարուստների եւ նրա մեծ մասի՝ աղքատների միջեւ առաջացած անդունդից, ոչ միայն կոչ էր անում սոցիալ-տնտեսական զոհե հարաբերական հավասարեցում ստեղծելու, այլև այդ անդունդը վերացնելու համար՝ հասարակության բոլոր խավերը լայնորեն ներգրավելով պետության կառավարմանը՝ «...հարուստ դասի քնած, անշարժ, հետզհետե մտավոր անբերրության մեջ սպառնող ուժերն ամբոխի կենսական հանճարի հոսանքով նորոգելու նպատակով», («Մշակ», 1876, N19): Այլապես, տագնապով նկատում էր նա, այդ հասարակարգը կործանման է դատարարված: Միայն հասարակ ժողովրդի անսպառ հանճարն է ունակ իր թարմ, ստեղծագործ ուժով անդադար նորոգելու հարուստ դասի հետզհետե «...անշարժութան ու մտաւոր անբերութան մեջ ընկած գործությունները» (նույն տեղում): Սա 19-րդ դարում, երբ կապիտալիզմը դեռևս հոգեւարքի մեջ չէր: Մեծ մտածողը իրավացիորեն տեսնում էր, որ հրեշավոր գույքային բեռնազանքներ, որն իր առավել այլաճակ ձեւերով բնութագրում է նաեւ մեր այսօրվա վիճակը, «նոր հասարակարգի» բերած մյուս կոնֆլիկտները, ժողովրդի փաստապես հեռանում իշխանությունից վաղ թե ուշ տանելու են այդ հասարակարգի կործանման: «Historia est magistra vitae», - ասում էին հին լատիները: «Պատմությունը կյանքի խրատատուն է, ուսուցիչ»:

Մեր մեկ ուրիշ, ոչ պակաս նշանավոր մտածող Ստեփանոս Նազարյանը ֆրանսիական 18-րդ դարի ավերիչ հեղափոխության, որն ավարտվեց «ղծբաստ» Լյուդովիկոս 16-րդի գլխատմամբ, պատճառներից մեկը (եթե ոչ հիմնականը) համարում էր իշխանություն-ժողովուրդ հարաբերությունների խորթացումը, հասարակական ներհակությունների, ծառայած հիմնախնդիրների լուծման անհրաժեշտությունը ժամանակին չտեսնելը (Տե՛ս «Գլուխափայլ», 1858, Տետրակ 4): Ի դեպ, ասենք թե՛ անգլիացի Կառլ 1-ի, ֆրանսիացի Լյուդովիկոս 16-րդի արյունաթաթախ գլուխներն անհամեմատ հեռավոր անցյալին են վերաբերում, իսկ մեր օրերի իրադարձությունները՝ եզրիպատացի Մութարաբը, ցատունով լեցուն ժողովրդի կողմից զբկված Լիբիայի առաջնորդ Քադաֆիին. մի՞թե դրանցից էլ հետեւություն չենք անում: Մինչդեռ մեր կառավարողների՝ քրեա-օլիգարխիկ խմբավորման ինքնահավանությունն ու ամբարտաւանությունը սահման չեն ծանաչում: Մեր խորին համոզմամբ ոչ միայն ներկա, այլև առավել աղետալի (ապագա) վիճակից փրկվելու, մասնավորապես երրորդ հանրապետությունն անկուն միջ փրկելու համար անհրաժեշտ է ձեռնարկել արմատական սոցիալ-տնտեսական, պետարական

փոփոխություններ՝ խաղաղ, քանի դեռ այն հնարավոր է: Ամենից առաջ՝ նոր սահմանադրության ընդունմամբ Աժ պատգամավորների թիվը պետք է հասցնել ոչ պակաս 300-ի, մինչ անկախությունը «ԳԽ»-ի պատգամավորների թիվը 340 էր, իսկ առաջին սահմանադրությանը՝ 1922թ. փետրվարին ընդունված, 300: 1-2 միլիոն բնակչության պայմաններում անգամ ԴեՍԽ պետական իշխանության օրենսդիր մարմնի անդամների թիվը 300-ից չի նվազել. այսօր, չզիտես ինչու, դրանց թիվը 131 է. ըստ որում՝ դրանց զգալի մասն էլ, ի խախտումն սահմանադրության 65-րդ հոդվածի պահանջների, փաստորեն բեռնազանքներ են՝ չատերը միլիոնատերեր, միլիարդատերեր (հիարկե ղոլարներով ու եվրոներով) եւ այլն: Աժ-ն պետք է դառնա իրոք ազգային եւ իրականում ժողովրդական, ներկայացուցչական մարմին: 300 պատգամավորից 150-ը պետք է ընտրվի մեծամասնական համակարգով՝ անմիջապես ժողովրդի կողմից՝ առաջադրվելով ըստ ընտրողների ժողովների՝ տեղերում, հասարակական կազմակերպությունների առաջադրմամբ եւ ինքնաառաջադրմամբ, ըստ որում՝ առանց ընտրական գրաւի եւ այլ անհարկի ցեմզերի (ոչ ոք իրավունք չունի ժողովրդի ձայնը սահմանափակել): Կուսակցություններին այդ համակարգով պատգամավոր ընտրելու իրավունք չպետք է վերապահվի: Պետք է արգելվի նաեւ նույն անձի միաժամանակյա առաջադրումը որպես պատգամավորի թեկնածու երկու ընտրական շրջանում, այսօր դեռեւս գործող մեծամասնական համակարգը՝ 41 պատգամավոր, վերացնելու մի շարք կուսակցությունների համառ ջանքերը, գործելակերպը, անկախ դրա հայտնի շարժառիթներից, ակնհայտորեն հակաժողովրդական է: Գերազանցապես, պետք է ապահովել այդ իմաստաւոր լիակատար ծավալումը: Բոլոր պատգամավորների համար պետք է նախատեսել (օրենքով նախատեսված հիմքերով) վաղաժամկետ հետկանչում, այդ թվում՝ անմիջապես ընտրողների նախաձեռնությամբ՝ ընտրողների կողմից:

Երկրորդ՝ արմատապես պետք է փոխվի դատական համակարգի կազմավորման եւ գործունեության կարգը: Գոնե առաջին ատյանի՝ ընդհանուր իրավասության, դատարանները եւ ՍԴ-ն պետք է ընտրվեն անմիջապես ժողովրդի կողմից: Իսկական գալիշտ է Աժ-ի եւ ԳԽ նախագահի կողմից ՍԴ-ի դատավորների նշանակումը: Սահմանադրության 100-րդ հոդվածի համաձայն նրանք ստուգում են իրենց նշանակողների կողմից ընդունված իրավական ակտերի օրինականությունը՝ սահմանադրականությունը: Ինչ վերաբերում է Վերաբնիչ եւ Վճռաբեկ դատարանների դատավորներին, ապա նրանք կարող են նշանակվել Աժ-ի կամ ԳԽ նախագահի կողմից, թեպետ այստեղ եւս ողջամիտը ժողովրդի կողմից ընտրվել է: Դատավորների վրա եւս պետք է տարածվի օրենքով նախատեսված հիմքերով վաղաժամկետ հետկանչումի իմաստաւորությունը: Դատավորությունը ծանր եւ առանձնապես ծանր հանցագործությունների վերաբերյալ գործերը պետք է կատարվի երդվյալների մասնակցությամբ. այդ իմաստաւոր, որը նախատեսված էր 1995թ. սահմանադրության 91-րդ հոդվա-

ծով եւ որը 2005-ին վերացվեց, նոր սահմանադրությամբ պետք է վերականգնվի եւ գործնականում իրացվի: Լուրջ փոփոխությունների, լրանջակման կարիք ունի քաղաքացիական եւ քրեական դատավարական օրենսդրությունը:

Երրորդ՝ ԳԽ ընդերքի մասին օրենսգրքի (ընդունված 6. XI. 2002թ.) 4-րդ հոդվածում նշված է, որ ընդերքը պետության բացառիկ սեփականությունն է եւ սեփականաշնորհման ենթակա չէ. մինչդեռ գաղտնիք չէ, թե այդ «բացառիկ»-ի անվան տակ այսօր ընդերքի անխիղճ կողոպուտի հետեւանքով ստացված սահեղի գումարների առյուծի բաժինն ուն գրպանն է մտնում: Կարծում են, որ պետք է անհապաղ հանդես գալ օրենսդրական նախաձեռնությամբ, այդ եւ մյուս հոդվածներում կատարել լրացում առ այն, որ. «Ընդերքը, նրա օգտակար հանածոները չեն կարող վարձակալմամբ կամ այլ եղանակներով մշտապես կամ ժամանակավոր օգտագործման տրվել ոչ պետական իրավաբանական, ինչպես նաեւ ֆիզիկական անձանց»: Ընդերքի օգտագործումից ստացված ամբողջ հասույթը պետք է մտնի պետությունը ու ամբողջությամբ օգտագործվի երկրի, ժողովրդի ու պետության կարիքների համար: Օգտակար հանածոներով ԳԽ-ում սահմանադրության 10-րդ հոդվածի մարզի գյուղական բնակավայրերն ավերվում, դատարկվում են, գործազրկության մակարդակը երիտասարդական շրջանում կրկնակի անգամ բարձր է համարապետական միջինից, նկատելի աշխուժացում է ապրում արտագաղթը, մինչդեռ նրա հարստությունը, ինչպես նշեցինք, հիմնականում լցվում է մի քանի անձանց գրպանը: Ընդերքի հարստությունը, դրանից ստացվող ամբողջ հասույթը պետք է մտնի պետական բյուջե, տեղերում՝ ապրանքային արտադրություն կազմակերպվի՝ դրանում ներգրավելով հազարավոր գործազուրկների՝ կանխելով նաեւ արտագաղթը ու բնակավայրերի ավերումը, ըստ որում՝ վերականգնելով կառավարության սնանկ քաղաքականության պատճառով ավերված բնակավայրերը եւ ոչ թե այն քողարկվի դրա համար ոչ մի խեղճ պահանջում: Միայն ընդերքի իրաւունքները կանխաձեռնվելու ենք, իսկ սեփական անկախ երկրում այն ոչ մի արդարացում չունի: Ընդերքի շահագործման հարցում նոր հայեցակարգի որդեգրումը, գործող օրենսդրության փոփոխումը, մեր համոզմամբ, հավասար է թուրք-պարսկական լծից Գայաստանի ազատագրմանը:

Չորրորդ՝ պետության հեղինակության համար, պետության նկատմամբ ժողովրդի կատարյալ պետական գնման համար անհրաժեշտ է ընդունել օրենք խորհրդային բանակերում քաղաքացիների ավանդներին համարժեք մարման մասին (համարժեք եւ ոչ թե մասնակի), ինչպես 2005-ի հայտնի խաբուսիկ օրենքով էր, կամ դրա՝ 2005-ի օրենքով նախատեսված կրկնակի չափով՝ 1 ռուբլի -1 դոլար հարաբերակցությամբ: Դա թե՛ նախկին, թե՛ ներկա ներպետական եւ թե՛ միջազգային-իրավական ակտերի պահանջն է. քաղաքացու սեփականությունը պետք է համարժեք վերադարձվի նրան: Աջակցության համար կարելի է բացել նաեւ մեր միլիարդատերերի գրպանները՝ ժողովրդից գողացած ունեցվածքից բող մի քիչ էլ վերադարձնել ժողովրդին: Իհարկե, թերեւս պետությունն ի վիճակի չէ միանգամից նման մարում

ԸՆՏՐՈՂԻ ԱՄԲԻՈՆ

ՔՎԵԱԹԵՐԹԻԿԻ ՆԱՈՒՇ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՅԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընտրողը նշում է կատարում այն թեկնածուի անվան դիմացի դատարկ քառանկյունում, որին կողմ է քվեարկում:
Նշումը կատարվում է միայն V ծնի նշանով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՅԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

18 փետրվարի 2013 թ.
Նշումի թամբ

1	ԲԱԳՐԱՏՅԱՆ ԳՐԱՆՑ ԱՐԱՐԱՏԻ	«ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՄԱԿՑՈՒԹՅՈՒՆ	
2	ՀԱՅՐԻԿՅԱՆ ՊԱՐՈՒՅՐ ԱՐԸԱԿԻՐԻ	ԻՆՔՆԱՍՈՍԱԳՐՈՒՄ	
3	ԳՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՐԱՖԳԻ Կ. ՈՒՉԱՐԴԻ	ԻՆՔՆԱՍՈՍԱԳՐՈՒՄ	
4	ՂՈՒԿԱՍՅԱՆ ԱՆՂՐԻԱՍ ՄԱՐԱՏԻ	ԻՆՔՆԱՍՈՍԱԳՐՈՒՄ	
5	ՄԵԼԻՔՅԱՆ ԱՐՄԱՆ ՎԱՐԴԱՆԻ	ԻՆՔՆԱՍՈՍԱԳՐՈՒՄ	
6	ՍԱՐԳՍՅԱՆ ՍԵՐԺ ԱԶԱՏԻ	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՄԱԿՑՈՒԹՅՈՒՆ	
7	ՍԵՂՈՎԿՅԱՆ ՎԱՐԴԱՆ ԺՈՐԺԻԿԻ	ԻՆՔՆԱՍՈՍԱԳՐՈՒՄ	

ՏՊԱԳՐՎՈՒՄ ԱՅՈՒՆ ԳՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՓԵՏ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՅԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Ի շրջանս յուր...



ՄԱՐԻ ԱՈՒԹԵԼՅԱՆ

Քարոզարշավը փարերքի մեջ է:
Հորդում է դեպի շրջաններ, գյուղեր,
Մայրաքաղաքը թարերաբեմն է,
Իսկ երևաբեմում եռում են կրթեր:

Իսկ Աստված վերում անհաղորդ մնում,
Միտքը չի հեռում, արյունը՝ եռում,
Նրա կարծիքով բոլորը վարում
Ողորդ են, զեռում...

Թողություն, քառս-մարդու աշխարհում
Ջոռքայությունն ինչ լավ է զբոսում:
Ո՛վ է բան առում, ձեռքն՝ ո՛վ բռնում:
Ինքն է, իր թայֆան -
Նրանք են հիմա աշխարհին փրկում -
Աշխարհ, ուր արդեն կաթիլն ամոթի
Քիչ է ավելի, քան էշի շեռում:

Իսկ այս օրիորդը ինչ լավ է բուրում
Քրքնած ամբոխի լարիքին թնեռում,
Հե՛յ, դեղնազուխ, կարճափեշ օրիորդ,
Ի՛նչ ես կորցրել դու բավիղներում,
Ու՛մ ես մոլորում քո փրկույթներում,
Գնա՛, թավալվիր փաթուկ անկողնուդ
խտուն ծայրերում...

Իսկ որոշները երկինասպ լռում
Ու չեն խառնվում ամբոխին հլու,
Ինչո՞ւ խառնվեն, ի՛նչ իմաստ ունի.

Նախանշված է են գլխից ուղին -
Հոսանքը գիպի ...
Իսկ ամբոխը կույր
Իրեն արժանի արքան կզրնի ...

Մակայն այս անգամ խաղաղ է թվում:
Անբոխն առաջվա նման չի եռում,
Ոչ էլ ձեռքեր են դեպի վեր հառնում,
Ձեռքերն այդ ոչ էլ բռունցք են
դառնում,
Բայց սովորույթի ուժին համակամ
Այս էլ ո՛րեքորդ ու քանի՛ անգամ
Այս ազգը կրկին հաշիվն է խառնում ...

Ու երբ ամեն ինչ մնում է հեռվում,
Երբ կրքերն ամեն մարում են, մեռնում,
Մարդկանց աչքերի մշուշը՝ ցրվում,
Պղտորը՝ պարզում,
Պարզվում է, սակայն, որ փոս է փորել
Ու դեռ հայրնվել հենց այդ նույն
փոսում:

Իսկ այնպեղ՝ բարձր թարերաբեմում,
«Բիրդան» հայրնված գլխավոր
դերում,
Փռչու ամպի մեջ իր թայֆան առած՝
Մեկը հաղթական իր պարն է պարում:

Մեկը՝ հագարից,
Մնացյալն՝ ուր,
Մնացյալն անվերջ՝
Ի շրջանս յուր ...

կատարել. ոչինչ, թող տարին ընդամենը 10 հոգու բավարարի՝ սկսելով, օրինակ, ծերերից, բայց օրենքում մատնանշելով, որ այդ ավանդների եւ ընդհանրապես ավանդների վրա եւս տարածվում են 33 քաղաքացիական օրենսգրքով սահմանված ժառանգական իրավունքի նորմերը: Ի դեպ, ժողովուրդը ոչ թե պետք է շնորհակալ լինի 2005-ի օրենքով նախատեսված մասնակի մարում-խաբեության համար, այլ այն բանի համար, որ դրանով իսկ այսօրվա պետությունը ճանաչել է այդ ավանդների մարման իր պարտավորությունը:

Լուրջ փոփոխությունների կամ նույնիսկ վերացման են ենթակա միջազգային իրավական ակտերին եւ մեր այսօրվա կիսատ-պրատ սահմանադրությանը հակասող մի շարք օրենքներ: Օրինակ՝ «Փաստաբանության մասին», իրականում՝ փաստաբանների պալատի մասին (օրենքի 49 հոդվածից 40-ը վերաբերում է պալատին) համաբարային օրենքը, որն էապես խոչընդոտում է փաստաբանության՝ այդ ազատ իրավապաշտպան պրոֆեսիայի ծավալմանը՝ (պատկերացնում ե՞ք, մարդու հորը, մորը, եղբորը, քրոջը, մեղադրում են որեւէ հանցագործության մեջ, իսկ ինքը, իրավաբան

լինելով, չի կարող պաշտպանել ակնհայտ անհիմն մեղադրվող իր մերձավորին, որովհետեւ համաբարային՝ փաստաբանների պալատի անդամ չէ... իսկական վայրենություն):

Պետության հեղինակության համար, պետության նկատմամբ ժողովրդի ջլատված վստահության վերականգնման համար չափազանց կարեւոր է ազատվել մեր պետական-քաղաքական կյանքի տարբեր օղակներում իրենց խարիսխը ձգած՝ բնականաբար ոչ առանց բարձրագույն իշխանությունների հովանավորության, քրեածին անցյալով, նաեւ ներկայով, անսանձ ու անպատիժ գործելակերպով զանազան անձանցից: Դրանց առկայությունը կամա թե ակամա հանգեցնում է այն հետեւության, որ մեր նորանկախ պետությունը՝ նրա պետական ապարատը բարոյական եւ իրավաչափ է այնքանով, որքանով բարոյական եւ իրավաչափ է այդ մարդկանց առկայությունը մեր պետական, հասարակական-քաղաքական կյանքում:

Հաճելի է նկատել, որ վերջերս 33 նախագահը մարզերից մեկում կայացած խորհրդակցությունում քննադատեց իր պաշտոնյաների խանգարողական գործելակերպը, բայց ում հետ էր նա քննարկում այդ հար-

ցը: Եվ ինչ օգուտ մնան քննադատությունից, երբ այդ մարդիկ, որոնցից շատերը «թանկարժեք ծայներ բերողներ են» ընդամենը, շարունակում են եւ դեռ կշարունակեն խելացնորության հասնող իրենց անսանձ ու անպատիժ գործունեությունը:

Այս եւ մեր ժողովրդին հուզող բազմաթիվ հիմնախնդիրներով, դրանց լուծմանն ուղղված կոնկրետ առաջարկություններով քանիցս դիմել ենք (33 սահմանադրության 27.1 հոդվածին համապատասխան) 33 նախագահին, ԱԺ-ին, սահմանադրական դատարան, հանրային խորհուրդ, Մարդու իրավունքների պաշտպանին եւ պատկան այլ մարմինների: Դրանք արտացոլվել են նաեւ մեր՝ արդեն հրապարակված գտնվող աշխատություններում: 33 նախագահի պատասխանը՝ «ղեկավարության անունից» երկու անգամ նույնիսկ շնորհակալություն է հայտնվել մեր մտահոգությունների, առաջարկությունների համար, սակայն սայլը տեղից չի շարժվում: 33 նախագահի՝ վերջերս հաճախակի հնչող խոսքը, թե իբր համակարգային փոփոխությունների ինչ-որ գործընթաց է սկսվել, իրականության հետ կապ չունի: Ապատիայի մեջ գտնվող ժողովուրդը շարունակում է «Առաջ Հայաստան», «Հավա-

տանք, որ փոխենք», «Եվս 5 տարի եւ մենք ուրիշ Հայաստան կունենանք» եւ այլ անհեթեթ կարգախոսների ու վարդազույն խոստումների քողի տակ զուռնա-դիդուկ «ընտրել» գյուղապետ, քաղաքապետ, պատգամավոր, նախագահ՝ քվեարկել իր ողորմելի ներկայի ու աղետալի ապագայի օգտին:

Աղետ է, երկիրը պետք է փրկել, քանզի այն, ինչպես Գարեգին Նժդեհն էր նշում, ոչ միայն ներկայիս սերնդին է, այլեւ անցյալ սերնդին ու նրանցը, ովքեր դեռ պետք է գան:

Եվ ուրեմն՝ երկիրը հրատապ ու արմատական փոփոխությունների կարիք ունի: Ու նախագահական ընտրության նախօրյակին կուսակցությունները եւ թեկնածուները պետք է այս՝ արդեն ճակատագրական դարձած պահին վերափոխվեն իրենց գործունեությունը՝ ձեռքազատվելով նեղ կուսակցական շահերից, իշխանատենչությունից եւ այլ սքողված կամ անսքող շահամոլական նկրտումներից:

Նույնիսկ Մոնտեսպյոյի նշած Լուիզիանայի վայրենի կհասկանար, որ իրեն գոյատևման իրավունքից զրկող, պատվի եւ արժանապատվության ամենատարակա կանոնները ոտնահարող պաշտոնյաններն ու քաղաքական

ուժերը պետք է անհապաղ հեռանա ասպարեզից:

Մի կուսակցության առաջնորդ-միլիարդատեր անցած տարվա ԱԺ ընտրությունների առնչությամբ իր ելույթում ասաց, որ ինքն Աստծո կամոք ամեն ինչ ունի: Հետաքրքիր է, Աստված ինչո՞ւ է այդպես ամեն ինչ տալիս մի քանի դուրսպրծուկի, քրեականի, իսկ մի ամբողջ ժողովրդի՝ չբավորության, տառապանքների դուռը հասցնում, մեզ համար պահում երկնային դրախտը: Հավատում եք Աստծուն, թե ոչ, դա ձեր գործն է, բայց հիշեք, որ մեր բախտի տերը մենք ենք, մեր ճակատագիրը մենք պետք է տնօրինենք:

Ու՞մ ընտրել. ընտրել նրան, ով սահմանազատվելու է քրեա-օլիգարխիկ խմբավորումից, եւ իր մեջ ուժ, խիզախություն է գտնելու՝ անհապաղ ձեռնամուխ լինել երկրում արմատական սոցիալ-տնտեսական, պետաիրավական փոփոխությունների կամ կոչ կանեի՝ ինչ էլ որ լինի, մի գնացեք երկրից, մեր երկրից լավ երկիր չկա, պարզապես ոչ թե մենք պետք է փախչենք երկրից, այլ մեր կյանքը դժոխային դարձրած մի քանի բախտախնդիրների պետք է քշենք երկրից:

Մի ընտանիքի պատմություն



ԽՈՍՔ ԵՎ ԳՈՐԾ

Խոսքն այս անգամ Սիսիանի քերատ մարզահամալիրի մասին է, որ պիտի կառուցվեր շատ կարճ ժամանակամիջոցում (այդպես էին խոստացել): Սակայն... Դա 2012 թվականի առաջին էր, առջեւում ՏԻՄ ընտրություններ էին: Կրկին քաղաքապետ ընտրվելու հայտ ներկայացրած Աղասի Հակոբջանյանը ծանր վիճակում էր: Նախորդ չորս տարում ԲՀԿ-ի կողմից Սիսիանի հանդեպ ցուցաբերած անտարբերությունը ԲՀԿ-ական քաղաքապետն ու այդ կուսակցության ղեկավարությունը փորձում էին ջնջել մարդկանց հիշողությունից: Եվ ի լուր աշխարհի հրապարակվեց Սիսիանում մարզահամալիր կառուցելու մասին այդ կուսակցության որոշումը: Արագ տեմպերով ինչ-որ կոնստրուկցիաներ բերեցին երես-

նից, ինչ-որ շինանյութեր թափեցին ապագա կառույցի մերձակայքում... Սեպտեմբերի 9-ը եկավ ու անցավ, ԲՀԿ-ական Աղասի Հակոբջանյանը վերստին նշանակվեց Սիսիանի քաղաքապետ: Մարզահամալիրի կառուցումը դադարեցվեց ու մինչև հիմա դադարեցված է, ավելի ճիշտ՝ հիմա այդ տարածքն աղբակույտ է հիշեցնում: Նախընտրական այդ օրերին, մինչդեռ, անախարհեպ եռուզեռ էր ֆուտբոլի մարզադաշտի հարեւանությամբ գտնվող պարարվեստի դպրոցի բակում: Տեսնել էր պետք, թե ինչպես է «Գագիկ Ծառուկյան» հիմնադրամը (այդպես գիտեմ) 42X18.5մ չափսերով մարզահամալիր կառուցում «բախտավոր» սիսիանցիներիս համար: Ի դեպ, Գագիկ Ծառուկյանն այդ մարզահամալիրի կառուցման խոստումը տվել էր 2007-ի Աժ ընտրությունների ժամանակ: Սիսիանցիները, իհարկե, դա-

սեր կքաղեն դրանից եւ այսուհետ հնարավորինս զուսպ կվերաբերվեն կուսակցությունների նախընտրական խոստումներին, մանավանդ ԲՀԿ-ի սիսիանյան խոստումներին: Բայց հիմա դա չէ խնդիրը: Խնդիրն այն է, թե աղբանոցի վերածված այդ կիսակառույցի տարածքը մինչև երբ է աղավաղելու Սիսիանի դեմքը: Հարցը, իհարկե, Աղասի Հակոբջանյանին չենք ուղղում, նրա հետ չի կարելի այդպիսի լուրջ հարցեր քննարկել: Հարցն ուղղում ենք ԲՀԿ առաջնորդին. պարոն Ծառուկյան, կամ մարզահամալիրի կառուցումն ավարտին հասցրեք, կամ էլ Սիսիանն ազատեք Ձեր իսկ նախաձեռնությամբ ստեղծված աղբակույտից: Հավատացե՛ք՝ սա հազարավոր սիսիանցիների պահանջն է, ուստի եւ ակնկալում ենք գործնական ու լուրջ վերաբերմունք: Մի խոսքով՝ տեր կանգնեք Ձեր խոսքին: **ՍԱՍՎԵԼ ՄԱՆՎԵԼՅԱՆ**

Արցախյան ազատամարտի շինուհայրցի նահապակը

ՈՂ ՈՔ ՉԻ ՍՈՒԱՅՎԵԼ

Շատ զնահատելի է «Այունյաց երկիր» որդեգրած գործելակերպը՝ հետեւողականորեն ներկայացնելու Արցախյան ազատամարտի մասնակիցներին եւ հատկապես նրանց, ովքեր իրենց կյանքը զոհաբերեցին մեր հանրապետության սահմանները պաշտպանելու եւ Արցախն օտարի լծից ազատագրելու սրբազան գործի համար:



Այսօր ուզում են հանրությանը տեղյակ պահել, որ մեր վերջին ազատամարտի զոհերից մեկն էլ շինուհայրցի Սեմիկ Հակոբյանն է: Սեմիկը մեծացել է մեր հարեւանությամբ, եւ ես գիտեի, թե նրա ներաշխարհում ինչ զգացմունքներ են իշխում հայրենիքի հանդեպ: Այնպես որ նա չէր կարող անտարբեր հայեցողի դերում լինել, երբ հայոց տանը վտանգ էր սպառնում: Այդպես էլ եղավ: Արցախյան ազատամարտի առաջին օրերից անդամագրվեց ինքնապաշտպանական ջոկատներին եւ մասնակցեց մարտական գործողությունների: Ընկերները պատմում են, որ Սեմիկը համարձակ ու քաջ մարտիկ էր, հայրենիքի նվիրյալ զինվոր: Նրա հետ էր նաեւ եղբայրս՝ Սուրիկ Միքայելյանը: Ըստ նրա՝ վճռական մարտերից մեկի ժամանակ 24-ամյա Սեմիկ Հակոբյանն ընկավ թշնամու զնդակից: Սեմիկ Հակոբյանի, ինչպես եւ ազատամարտի մյուս նահատակների հիշատակը վառ են պահում համագյուղացիները: Նա իր վերջնական հանգրվան է գտել գյուղի գերեզմանոցում: Շատերն են այցելում նրա շիրմին եւ հարգանքի տուրք մատուցում նահատակ հայրորդու հիշատակին: Զոհված ազատամարտիկների հիշատակի հարգումը ոչ միայն մեր ողջերիս պարտքն է, այլեւ աճող սերնդին դաստիարակելու լավագույն ձեւերից մեկը, ինչը պետք է նկատի ունենալ: Հարգանք Սեմիկ Հակոբյանի հիշատակին: **ՍԱՍՎԵԼ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ Գ. ՇԻՆՈՒՀԱՅԻ**

Հակոբ Մանվելյան

ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ

2013թ. հունվարի 20-ին կյանքի 90-րդ տարում վախճանվեց Հայաստանի ժուռնալիստների միության անդամ՝ Հակոբ Ռուբենի Մանվելյանը: Ծնվել է 1923թ. նոյեմբերի 5-ին Գորիսի շրջանի Խնձորեսկ գյուղում: Գյուղի միջնակարգ ավարտելուց հետո, ընդունվել է Գորիսի մանկավարժական ուսումնարան եւ գերագույն առաջադիմությամբ ավարտել այն: 1940-41 ուստարում աշխատանքի է անցել Խնձորեսկի միջնակարգ դպրոցում՝ ուսուցիչ: 1942թ. օգոստոսին գորակոչվել է բանակ, 1943-ից մասնակցել զերմանական զավթիչների դեմ մղվող մարտերին: Բանակում էլ ընդունվել է կոմունիստական կուսակցության շարքերը: Բազմի դաշտում վիրավորվելուց հետո 1944-ին գորագրվել ու վերադարձել է Խնձորեսկ: 1944-46թթ. գյուղում աշխատել է ուսուցիչ եւ ակումբի վարիչ, ինչպես եւ կոլտնտեսության կոմերիտական կազմակերպության քարտուղար: 1946թ. ընտրվել է ՀԼԿԵՄ Գորիսի շրջանի երկրորդ, 1947թ. նոյեմբերին՝ առաջին քարտուղար՝ աշխատելով մինչև 1949թ. սեպտեմբեր: 1949-51թթ. սովորել է ՀԿԿ կենտրոնի կից երկամյա կուսակցական դպրոցի ժուռնալիստիկայի բաժնում: Զուգահեռաբար (էքստենս) ավարտել է Երեւանի Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը: 1951թ. սեպտեմբերից խմբագրել է Գորիսի շրջանային թերթը, որը սկզբում լույս էր տեսնում «Ստալինյան դրոշմով», ապա՝ «Որոտան», իսկ 1959 թվականից՝ «Զանգեզուր» անվամբ: 1966 թվականից Հ.Մանվելյանն անցել է պետական-տնտեսական աշխատանքի: Մինչև 1975թ. հունիսն աշխատել է

Գորիսի շրջապարհի գործկոմի կուլտուրայի բաժնի վարիչ, ապա մինչև 1977թ. հունիսը՝ շրջապարհի գործկոմի նախագահի տեղակալ: 1977-87թթ. Գորիսի շրջանի բնակչության կենցաղային սպասարկման կոմբինատի (արտադրական վարչության) տնօրենն էր: Կենսաթոշակի անցնելուց հետո զբաղվել է հասարակական եւ ստեղծագործական աշխատանքով: 1987-90թթ. եղել է Հայրենական մեծ պատերազմի վետերանների շրջանային կազմակերպության ղեկավար, այնուհետեւ՝ աշխատանքի եւ պատերազմի վետերանների շրջանային խորհրդի նախագահ: Հ.Մանվելյանը «Գորիսի դրամատիկական թատրոնի պատմությունը» ուսումնասիրության հեղինակն է, իսկ կյանքի վերջին տարիներին աշխատում էր «Խնձորեսկի պատմությունը» մենագրության վրա: Երկարամյա գործունեության ընթացքում նա ակտիվորեն մասնակցել է Գորիսի կուսակցական, պետական եւ հասարակական կյանքին: 1953-77թթ. անընդմեջ ընտրվել է կուսընկերների անդամ, 1953-56թթ.՝ կուսընկերների բյուրոյի անդամ: Երեսուց տարուց ավելի եղել է Գորիսի շրջապարհի պատգամավոր, 1966-77թթ.՝ շրջապարհի գործկոմի անդամ: ԽՍՀՄ ժուռնալիստների միության անդամ էր 1959 թվականից: Հ.Մանվելյանի նվիրական աշխատանքը քանիցս զնահատանքի է արժանացել: Մասնավորապես՝ պարզեատրվել է Հայրենական մեծ պատերազմի 2-րդ աստիճանի շքանշանով, «Աշխատանքային արիության համար», «Աշխատանքային գերազանցության համար» մեդալներով, ՀԽՍՀ գերագույն խորհրդի նախագահության պատվոգրով, «Մարշալ Բաղդամյան» հուշամեդալով: Հ.Մանվելյանի հիշատակն անմար կմնա նրան ճանաչողների սրտերում: Նրա անունն արդեն իսկ տեղ է գտել Գորիսի խորհրդային շրջանի պատմության մեջ: **Մի խումբ ընկերներ**

- ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ** Կապանի արվեստի պետական թուղթի դասախոսական կազմը եւ ուսանողները խորապես վշտացած են Սեդրուկ պետական թուղթի տնօրեն Հակոբյանի անձամասնակ մահվան առիթով եւ ցավակցում են հանգուցյալի ընտանիքին եւ հարազատներին:
- ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ** «Այունյաց երկիր» թերթի խմբագրակազմը ցավակցում է Միեր Եղիազարյանին (Սիսիան)՝ հորաքրոջ որդու՝ Վոլոդյա Մարտիրոսյանի վաղաժամ մահվան կապակցությամբ:
- ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ** «Այունյաց երկիր» թերթի խմբագրակազմը ցավակցում է Ռոբերտ Կամոյանին (Կապան)՝ տիկնոջ՝ Սվետլանա Օրբելյանի մահվան կապակցությամբ:

Այունյաց երկիր
Տ Ա Ս Ն Ո Ր Տ Ա Թ Ե Ր Թ

Գլխավոր խմբագիր՝ **ՍԱՍՎԵԼ ԱՆԵՔՍԱՆՅԱՆ**

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռախոս՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 06 28 02:
Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«**ԳՈՎԱԶԳՐ - ԾԱՆՈՒԹՅՈՒՄ**» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Այունյաց երկրին» պարտադիր է:

® Ոչանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 4 տպագրական մամուլ: Տպաբանակը՝ 2000, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 14.02.2013թ.:

